26 ՄԱՐՏ 2011 ՇԱԲԱԹ 53(4672)

# Ազգ

Azg

ISSN: 1829-1651


## Նախագահը կմեկնի Թեհրան

Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Մահմուդ Ահմադինեժադի հրավերով նախագահ Սերժ Սարգսյանը մարտի 27-ին աշխատանքային այցով կմեկնի Թեհրան: Երկրի ղեկավարի մամուլի գրասենյակի տեղեկացմամբ, այցի շրջանակում հանրապետության ղեկավարը հանդիպումներ կունենա Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադի, հոգեւոր առաջնորդ Սեյեդ Ալի Խամենեիի հետ, ինչպես նաեւ այլ երկրների ղեկավարների հետ կմասնակցի Նովրուզի տոնակատարությանը: Վերջինիս մասնակցելու կապակցությամբ Ահմադինեժադը հրավեր է ուղարկել մի շարք երկրների նախագահների, այդ թվում` Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւին: Ինչպես նշում են ադրբեջանական լրատվամիջոցները` Ալիեւը չի մեկնի Թեհրան, Բաքուն Իրանում կներկայացվի փոխվարչապետի մակարդակով:

Հ. Ա.

## Կկայանա՞ ռեւանշը 12 տարի անց

### *Արժանապատիվ խաղի եւ հաղթանակի ակնկալիքով*

ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ




Այսօր ժամը 19-ին «Հանրապետական» մարզադաշտում շոտլանդացի մրցավար Քրեյգ Թոմփսոնը կազդարարի երկար սպասված Հայաստան-Ռուսաստան ընտրական մրցախաղի մեկնարկը: Հանդիպումը հսկայական հետաքրքրություն է առաջացրել երկու երկրներում էլ, որն առաջին հերթին պայմանավորված է ընտրական 2-րդ խմբում ստեղծված իրավիճակով: Հիշեցնենք, որ 4 տուրից հետո աղյուսակը 9 միավորով գլխավորում է ՌԴ հավաքականը: 7-ական միավորով ռուսներին հետապնդում են Հայաստանի, Իռլանդիայի եւ Սլովակիայի ընտրանիները: Այսօր սլովակները հյուրընկալվում են առանց միավորի աղյուսակը եզրափակող Անդորրայի հավաքականին, իսկ Իռլանդիայի ընտրանին սեփական հարկի տակ մրցելու է 4 միավորով 5-րդ տեղը զբաղեցնող մակեդոնացիների հետ:

Որքան էլ զարմանալի է, ֆուտբոլային հարուստ ավանդույթներ ունեցող երկու բարեկամ երկրների ազգային հավաքականները մինչ օրս միայն 2 անգամ են մրցել: Գուցե այդ հանդիպումներն էլ չկայանային, եթե վիճակահանությամբ Հայաստանի եւ Ռուսաստանի հավաքականները Եվրո-2000-ի ընտրական մրցաշարում չընդգրկվեին միեւնույն խմբում:

*Տես էջ 7*

**ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ**

## Արա Աբրահամյանը «Տարվա բարեգործն» է

### *«Ինչպես յուրաքանչյուր մրցանակ, այս մեկը եւս Աբրահամյանին պարտավորեցնում է»*



**Իր գործունեության ընթացքում Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը արժանացել է բազմաթիվ մրցանակների, ոչ միայն Հայաստանում, որի բարօրությանն է ուղղված Աբրահամյանի գործունեության ծանրակշիռ մասը, այլեւ Ռուսաստանում, որի էլ ավելի ժողովրդավարացմանը, միջհամայնքային կապերի կայացմանն ու ամրապնդմանը նույնպես աջակից է նա իր գործունեությամբ: Աբրահամյանի հերթական մրցանակի անվանումն արդեն իսկ խոսուն է` 2010-ի արդյունքներով «Տարվա բարեգործ». հենց այս մրցանակին է արժանացել ՀՀԿ եւ ՌՀՄ նախագահը Luxury ամսագրի կողմից: Տարբեր ոլորտներում ամենաներկայանալի գործիչներին գնահատելու, երկրի զարգացման հարցում նրանց ներդրումը կարեւորելու եւ արձանագրած հաջողությունները խրախուսելու նպատակով վերոհիշյալ ամսագիրը Հայաստանում սկսել է իրականացնել իր ձեւաչափով նախադեպը չունեցող մրցանակաբաշխություն:**

**Նախագիծն իր հասուկ ուղերձով ողջունել է ՀՀ առաջին տիկինը: Ավելի քան 500 հավակնորդների միջեւ ընտրություն կատարելու համար նախ իրականացվել է ծավալուն ուսումնասիրություն. ամենօրյա հետեւողական աշխատանք` նրանց գործունեությանը հետեւելու հարցում եւ մասնագետների կարծիքների համեմատություն: Նախագծի երկրորդ փուլում 22 հոգուց բաղկացած ժյուրին կատարել է հավակնորդների նախնական ընտրություն` յուրաքանչյուր անվանակարգում ընտրելով 3-ական հավակնորդի: Ընդհանուր առմամբ, հավակնորդների թիվը գերազանցել է 500-ը:**

**Մեր թերթը բազմիցս է անդրադարձել գործարար եւ բարեգործ Աբրահամյանի` Հայաստանում եւ Արցախում իրականացրած աշխատանքներին: Այսօր ՀՀԿ-ն եւ ՌՀՄ-ն իրենց ավանդն ունեն հայրենական գիտության, ստեղծագործական միությունների, անհաս ստեղծագործողների աշխուժացման, բանակաշինության, դպրոցաշինության գործում, մշակութային աշխարհում: Ընդ որում, եթե նախկինում այդ աշխատանքները հիմնականում բարեգործական բնույթ էին կրում, ապա այժմ բարեգործությանը գումարվել է նաեւ հայրենիքի հետ գործակցությունը, ինչն, անշուշտ, էլ ավելի պետք է նպաստավոր լինի Հայաստանի եւ Արցախի զարգացման գործին:**

**Մրցանակը մարտի 24-ին մայրաքաղաքի Mezzo Classik House Club-ում Արա Աբրահամյանի անունից ստացավ ՀՀԿ եւ ՌՀՄ փոխնախագահ Վլադիմիր Աղայանը: «Աբրահամյանի անունից ողջունում եմ մրցանակաբաշխության բոլոր մասնակիցներին եւ հաղթողներին` ցանկանալով նրանց նորանոր ձեռքբերումներ: Նշեմ նաեւ, որ սա Աբրահամյանի առաջին մրցանակը չէ, սակայն ինչպես մնացած բոլորի դեպքերում, այս մեկը նույնպես, վստահաբար, Աբրահամյանը չի դիտարկելու որպես կատարած աշխատանքի գնահատական, այլ` պարտավորություն` շարունակելու աշխատանքը ի բարօրություն հայրենիքի», ասաց Աղայանը:**

**Ավելացնենք նաեւ, որ Հայաստանում հրատարակվող ամսագրի մրցանակաբաշխությունը բաղկացած էր 50 անվանակարգերից: Աբրահամյանից բացի` «Լավագույն բարեգործ» կոչմանը արժանացել է նաեւ «Վիվասել»-ՄՏՍ-ի տնօրեն Ռալֆ Յիրիկյանը: «Լավագույն գործարար» կոչմանն արժանացավ Սամվել Կարապետյանը, «Լավագույն երաժիշտ»` Ռոբերտ Ամիրխանյանը, «Լավագույն գրող»` Պերճ Զեյթունցյանը, եւ այլք: Միջոցառմանը հրավիրված էին մի շարք պատվարժան հյուրեր:**

Հ. Ա.

## Ադրբեջանական շահերի լոբբիստը` կաշառակեր

Եվրոպական խորհրդարանը հետաքննություն է սկսել իր երեք անդամներին ներկայացվող մեղադրանքների առնչությամբ: Երեք ԵՄ խորհրդարանականները, որոնք բոլորն էլ նախկին նախարարներ են, մեղադրվում են կաշառքներ վերցնելու մեջ` ֆինանսական ոլորտը կարգավորող օրենսդրության մեղմացմանն ուղղված որոշակի օրենսդրական փոփոխություններ մտցնելու դիմաց:

The Sunday Times պարբերականի, մի շարք այլ պարբերականների ու կայքէջերի փոխանցմամբ, The Sunday Times-ի սեփական հետաքննությամբ պարզվել է, որ ԵԽ եվրոպական սոցիալիստների խմբի երեք պատգամավորներ` Ավստրիայի ներքին գործերի նախկին նախարար Էռնստ Շտրասսերը, Ռումինիայի նախկին փոխվարչապետ Անդրիան Սեւերինն ու Սլովենիայի արտաքին գործերի նախկին նախարար Զորան Թիալերը մոտ 100 հզ. եվրո կաշառք են վերցրել` բանկային համակարգի ներկայացուցիչների համար նախընտրելի օրենսդրական փոփոխությունների նախագծեր Եվրոպական խորհրդարանում ներկայացնելու համար:

Հայաստանը, ինչպես եւ շատ այլ բազմաթիվ երկրներ, բնավ էլ զերծ չէ կաշառակերությունից, եւ այսպիսի մի իրավիճակ սպասելի է նաեւ եվրոպական երկրների պարագայում, սակայն այս սկանդալի պարագայում առավել հետաքրքրականն այն է, որ կաշառք վերցնելու մեջ մեղադրվող երեք խորհրդարանականներից մեկը հայտնի է որպես ադրբեջանական շահերի լոբբիստ, մարդ, որն ամեն դեպքում փորձում է առաջ տանել ադրբեջանական շահերը:

Խոսքը Ռումինիայի նախկին փոխվարչապետ Անդրիան Սեւերինի մասին է, որի` նման սկանդալում ներգրավված լինելու հանգամանքը տեղիք է տալիս ենթադրելու, որ վերջինս թերեւս չի հրաժարվել նաեւ ադրբեջանական փողերից` նույն մեթոդով աշխատելու դիմաց:

Թեեւ եվրոպատգամավորը չի ընդունում իր հասցեին ուղղված մեղադրանքները, իր վարքագիծը որակելով ԵԽ-ում ընդունված գործելակերպ, այդ կապակցությամբ կտրուկ հայտարարություններով են հանդես եկել մի շարք խորհրդարանականներ: Եվրոպական խորհրդարանի փոխնախագահ Դայանա Ուոլիսը հայտարարել է, որ հանդես է գալու պաշտոնական հետաքննություն սկսելու նախաձեռնությամբ:

Իսկ եվրոպական սոցիալիստների խմբի նախագահ Մարտին Շուլցը կարգադրել էր Սեւերինին դուրս գալ խմբից` հայտարարելով, որ ապագայում ցանկացած նման դեպքում ինքը վարվելու է նույն կերպ: Իր խոսքում Մարտին Շուլցը նշել էր նաեւ, որ յուրաքանչյուր խորհրդարանական, որը կարող է մեղադրվել կաշառակերության մեջ, պետք է անհապաղ հրաժարական ներկայացնի:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## Լրանում է տիեզերական առաջին թռիչքի 50 տարին

1961 թվականի ապրիլի 12-ին Յուրի Գագարինը «Վոստոկ» տիեզերանավով առաջինը բարձրացավ Երկրի ուղեծիր եւ 89 րոպեում մեկ պտույտ կատարեց Երկրի շուրջը: Մինչեւ այսօր տիեզերական թռիչքներ են կատարել 36 երկրների 530 տիեզերագնացներ:

Այս իրադարձության 50-ամյակը նշվում է մի շարք երկրներում: Ամենախոշոր միջոցառումը` Starmus փառատոնը, լինելու է հունիսին Կանարյան կղզիներում: Այն կազմակերպում է մեր հայրենակից աստղագետ **Գարիկ Իսրայելյանը**: Հայաստանում նույնպես մի շարք միջոցառումներ են լինելու: Նախ ապրիլի սկզբին պատրաստվում են Հայաստան այցելել հայտնի տիեզերագնացներ Ալեքսեյ Լեոնովը, Գեորգի Գրեչկոն ու Վլադիմիր Ջանիբեկովը: Ապրիլի 12-ին Գիտությունների ազգային ակադեմիայում լինելու է գիտական նստաշրջան: Իսկ Բյուրականի աստղադիտարանում կկազմակերպվեն սեմինար ու Գագարինյան միջազգային գիտաժողով:

Ի. Պ.

## Անցնում ենք ամառային ժամանակի

**2011 թվականի մարտի 27-ին, մարտի վերջին կիրակի օրը, ժամը 2:00-ին անցնում ենք ամառային ժամանակի:**

## Թմրանյութերն Իրանից ու Աֆղանստանից աշխարհին անցնում են Վրաստանով ու Ադրբեջանով

Վրաստան-Իրան ջերմացած հարաբերություններն ու հասկապես այս տարվա հունվարից երկու երկրների միջեւ ոչ անցագրային ռեժիմի անցնելու հանգամանքը, որի առնչությամբ Միացյալ Նահանգներն առանձնակի չէր արտահայտվել, փաստացի, չէին կարող լռության մատնվել ԱՄՆ կողմից: Իսկ որ լռության չեն մատնվել, վկայում է օրերս հրապարակված ԱՄՆ պետքարտուղարության զեկույցը թմրանյութերի շրջանառության առնչությամբ:

Ամենամյա զեկույցում նշվում է, որ Իրանից ու Աֆղանստանից թմրանյութերը աշխարհի այլ երկրներում են հայտնվում Վրաստանի ու Ադրբեջանի միջով: Ադրբեջանական կայքէջերի տեղեկացմամբ, ԱՄՆ պետքարտուղարությունը մտահոգություն է հայտնել այս իրավիճակի առնչությամբ:

Ըստ զեկույցի տրամաբանության, Վրաստանի աշխարհագրական դիրքը այդ երկիրը թմրանյութերի համար խոշորագույն միջանցքներից է դարձնում: Այս դիտարկման կողքին, թեեւ ոչ անմիջապես եւ ուղղակի կերպով, բայց ԱՄՆ պետքարտուղարության զեկույցում նշվում է, որ դրան նպաստում է նաեւ Իրանի հետ Վրաստանի ոչ անցագրային ռեժիմի անցնելու փաստը: Ըստ զեկույցի, սահմանը հատելիս քաղաքացիների ոչ լիարժեք ստուգումների պարագայում Վրաստան մուտք գործող թմրանյութերի քանակը կարող է մեծանալ, հասկապես որ, ըստ նույն զեկույցի եզրակացությունների, Աֆղանստանից արտահանվող օպիումի 40 տոկոսն անցնում է Իրանով:

Զեկույցում նշվում է, թե Իրանից եւ Աֆղանստանից թմրանյութերը հանվում են երկու ճանապարհով: Առաջինը Ադրբեջանի տարածքով է, որից հետո թմրանյութերը հայտնվում են Ռուսաստանում եւ Արեւմտյան Եվրոպայում: Երկրորդ խողովակը Հունաստանից եւ Թուրքիայից Վրաստանով թմրանյութերի` եվրոպական երկրներ անցումն է:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Բաքուն ընտրությո՞ւն է կատարում պատերազմի եւ խաղաղության միջեւ

Շփման գծում զինադադարի խախտման դեպքերի հաճախացման առթիվ փորձագիտական հանրության կողմից երկու վարկած է շրջանառվում. կամ Ադրբեջանի նախագահն այդ կերպ փորձում է չեղարկել Սոչիի հանդիպման պայմանավորվածությունները, կամ նա ուղղակիորեն չի վերահսկում բանակը:

Վարկածներից յուրաքանչյուրն էլ գոյության իրավունք ունի: Այդուհանդերձ, խիստ ուշագրավ է, որ «Մուսավաթ» կուսակցության պաշտոնաթերթը մի վերլուծականով փորձել է պարզել, թե ինչ է պատրաստվում ձեռնարկել Իլհամ Ալիեւը «բանակում տիրող իրավիճակը շտկելու համար»:

Բանն այն է, որ, ինչպես թերթին է հաջողվել իմանալ, «արդեն մեկ շաբաթ է, ինչ նախագահի անվտանգության եւ պաշտպանության հարցերով խորհրդական գեներալ-լեյտենանտ Վահիդ Ալիեւը ռազմաճակատային գոտում է»:

Նա «այնտեղ է գործուղվել նախագահի անմիջական հանձնարարությամբ եւ տեսչական ստուգումներ է անցկացնում զորամասերում՝ պարզելու զինծառայողների մահվան պատճառները, ուսումնասիրելու նրանց կենցաղային պայմանները»:

Թերթը գրում է, որ այդ ամենը հնարավոր էր համարել «խորհրդականի հերթական շրջայց, եթե վստահելի աղբյուրներից հայտնի դարձած չլինեին, որ Վահիդ Ալիեւի եւ պաշտպանության նախարար Սաֆար Աբիեւի հարաբերությունները լարվել են, եւ ուժերի հարաբերակցությունը երկրորդի օգտին չէ»:

Մասնավորապես, որպես սեփական վարկածի վկայություն, թերթը գրում է, որ վերջերս մինչ այդ ՊՆ համակարգում աննշան պաշտոն զբաղեցնող՝ Վահիդ Ալիեւի հարազատ եղբայր Վիդադի Ալիեւը «կայծակնային արագությամբ առաջ է քաշվել եւ նշանակվել ներքին զորքերի հրամանատարի տեղակալ ու ստացել գնդապետի զինվորական կոչում»: Վերջինիս նախընթաց շրջանի որեւէ առաջխաղացում, ըստ նույն աղբյուրի, «մշտապես խոչընդոտվել է Սաֆար Աբիեւի կողմից»:

Պաշտպանության նախարարի դիրքերի թուլացման եւս մեկ ապացույց է, որ Իլհամ Ալիեւը շատ կոպիտ է վերաբերվել նրա հետ՝ փետրվարի 20-ին 7 զինվորի սպանության դեպքին նվիրված խորհրդակցության ժամանակ: Այդ մասին հայտնի է դարձել նույն միջոցառման մասնակիցներից, որոնք էլ ենթադրել են, որ «պաշտպանության նախարարն ստացել է վերջին նախազգուշացումը»:

Հնարավոր է, որ գլխավոր ռազմական խորհրդականի շրջայցը ճակատային գոտի ունի բոլորովին այլ իմաստ, քան այդ մասին խոսվում է նույնիսկ ընդդիմադիր կուսակցության կողմից վերահսկող լրատվամիջոցում:

Ամեն դեպքում, սակայն, խնդրի էությունը դրանից գրեթե չի փոխվում. Իլհամ Ալիեւին պաշտպանության նախարարի կողմից ներկայացվող զեկուցագրերն ու իրավիճակի գնահատականները չեն բավարարում: Եվ նա փորձում է բանակի հարցում կողմնորոշվել նաեւ իր խորհրդականի միջոցով:

Իսկ որ վերջին ժամանակներս ադրբեջանական լրատվամիջոցներում ավելի ու ավելի համառորեն է շրջանառվում Սաֆար Աբիեւի հավանական պաշտոնանկման թեման, կարծես վկայում է, որ Ադրբեջանում լուրջ ներքաղաքական քննարկումներ են սկսվել ոչ միայն զուտ իրավիճակից ելք փնտրելու, այլեւ ավելի արմատական, գուցե թե նաեւ «պատերազմի եւ խաղաղության միջեւ ընտրություն կատարելու» թեմայով:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Կրծողները շարունակում են վնասել բերքատվությանը

**Հայաստանում ավելացել է մկնանման կրծողների թիվը: Գյուղատնտեսության նախարարության բուսաբուծության ու բույսերի պաշտպանության վարչության պետ Գագիկ Մանուչարյանը պատմում է. «Սյունիքի մարզում բանը հասել է նրան, որ քնամկները բարձրանում են ծառի վրա, ուտում նուռը, իսկ կորիզներն էլ պահեստավորում ձմռանն ուտելու համար»: Երեկ «Հենարան» ակումբում Գագիկ Մանուչարյանը թեեւ նշեց, որ բերքատվությունն ավելի շատ կախված է եղանակային պայմաններից, քան մկնանման կրծողներից, բայց միեւնույն ժամանակ հավելեց. «Մկնանման կրծողները եւս կարող են ընդհանուր բերքին՝ տարեկան 10-15 տոկոսի չափով վնաս պատճառել»:**

**Հանրապետության բոլոր մարզերում կրծողները բավականին մեծ վնասներ են հասցրել: Դաշտերում վնաս հասցնում են ինչպես մկնանման կրծողները, այնպես էլ կուրամկները՝ խլուրդները, որոնց դեմ երաշխավորված պայքար իրականացնել, ըստ Գագիկ Մանուչարյանի, դեռեւս չի հաջողվում: Այսօր դաշտերում կան շուրջ 4-5 տեսակի մկներ՝ քնամկներ, սովորական դաշտամկներ, ճագարամկներ եւ այլն: Սրանց տարածումը կանխելու համար հարկավոր է ձեռնարկել լուրջ ու կազմակերպված միջոցներ: Գագիկ Մանուչարյանը տեղեկացրեց, որ մկնանման կրծողների դեմ պայքարը կարողացել են կազմակերպել շուրջ 140 հազար հեկտարի վրա, մինչդեռ հանրապետությունում կան գյուղատնտեսական նշանակություն ունեցող շուրջ 2 միլիոն 100 հազար հեկտար հողատեսքեր, հետեւապես մկնանման կրծողների դեմ կատարված աշխատանքները չնչին են:**

**Խլուրդներն ու կրծողները շարունակում են վնասել բերքատվությանը, իսկ կառավարությունը, ըստ Գագիկ Մանուչարյանի, ֆինանսական դժվարին պայմաններից ելնելով՝ չունի այնպիսի հնարավորություն, որ դրանց դեմ պայքար կազմակերպի հանրապետության բոլոր տարածքներում: «Դրա համար էլ վերջին տարիներին բավականին տարածվել են մկնանման կրծողները, այսօր արդեն ունենք այն, ինչ որ ունենք», ավելացրեց բանախոսը:**

**Ի. Պ.**

# «Էլեկտրատրանսպորտը քաղաքային տրանսպորտը զարգացնելու միակ ճանապարհն է»

**Որ մայրաքաղաքում օդի աղտոտվածությունը հասել է աննորմալ մակարդակի, նորություն չէ, ու հասկանալու համար հստակ թվեր եւ տվյալներ հարկավոր չեն: Հատկապես ամառային ամիսներին քաղաքի կենտրոնում քիչ է մնում շնչահեղձ լինես: «Սպառողների ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ Արմեն Պողոսյանի խոսքով՝ 91 տոկոսով քաղաքի օդային ավազանի աղտոտման պատճառը տրանսպորտն է: «Ինչպես էկոլոգիապես մաքուր ու անվնաս տրամվայը կորցրեցինք, այդպես էլ շուտով կորցնելու ենք տրոլեյբուսը, որը հիմա հոգեվարքի մեջ է», երեկ լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց Արմեն Պողոսյանը եւ ընդգծեց, որ քաղաքային տրանսպորտի զարգացման միակ ճանապարհը էլեկտրատրանսպորտն է, ոչ թե միկրոավտոբուսների խմբաքանակը:**

**Նրա փոխանցմամբ՝ Երեւանի գլխավոր հատակագծում, որն, ի դեպ, օրենքի ուժ ունի, ամրագրված է, որ միկրոավտոբուսների քանակը պետք է կազմի տրանսպորտային փոխադրամիջոցների ընդամենը 19,2 տոկոսը, այնինչ այսօր կազմում է 85 տոկոսը: «Եթե միկրոավտոբուսների թիվն այս տեմպերով շարունակի նվազել, ապա 19,2 տոկոսին մենք կհասնենք միայն Քրիստոսի երկրորդ գալուստյանը: Իսկ մեզ համար ձեռնտու չէ այդքան սպասելը», հավելեց Ա. Պողոսյանը:**

**Սպառողների պաշտպանը նաեւ կարծում է, որ քաղաքային տրանսպորտը կարգի բերելու համար հիմա ամենապատեհ պահն է, քանի որ մշակվում է քաղաքային տրանսպորտի զարգացման պլանը, որտեղ, սակայն, նշված չէ էլեկտրատրանսպորտի զարգացման գերակա խնդիրը:**

**Ի. Պ.**

# «Ամերիա գրուպը» մտահոգված է Հայաստանում իրավական պրոֆեսիոնալ դաշտի ստեղծմամբ

**Այս կապակցությամբ «Ամերիա գրուպը» երեկ իրականացրեց սեմինար՝ «Իրավական պրակտիկայի կառավարում. տարրերը, գործիքները եւ փոխադարձ կապը» խորագրով: Հայ իրավաբանների, իրավաբանական անձանց, որոշ ընկերությունների ղեկավարների եւ ներկայացուցիչների համար սեմինարը վարելու էր հրավիրված ռուս ճանաչված իրավաբան, LegalStudies.RU-ի ղեկավար գործընկեր Ալեքսանդր Խվոշինսկին: Լրագրողների հետ զրույցում վերջինս ընդգծեց, որ Հայաստանում նման սեմինարի անցկացումը «համագործակցության արդյունք է». «Սեմինարի նպատակն է կիսել մեր փորձը կոնկրետ հայ իրավաբանների հետ: Ըստ իս Հայաստանը, ի դեմս մեր գործընկեր «Ամերիա գրուպի», փորձում է կարգավորել ընկերությունների կառավարման համակարգը, եւ մեր խնդիրն է ցույց տալ դրա առավել արդյունավետ տարբերակները», ասաց Խվոշինսկին: Իրավաբանը, հույս հայտնելով, որ «ի վերջո Հայաստանում կլինեն բարձրակարգ իրավաբաններ», նշեց, որ ինչպես ԱՊՀ երկրներում, այնպես էլ մեր երկրում այս պահին ոլորտում իրավիճակը «տխուր պատկեր» է հիշեցնում. «Սակայն ասեմ նաեւ, որ Հայաստանում իրավիճակը ավելի տխուր չէ, քան այլ ԱՊՀ երկրներում», նշեց Խվոշինսկին:**

**Իր հերթին «Ամերիա գրուպի» իրավական հարցերով տնօրեն Դավիթ Սարգսյանը նշեց, որ իրենց ընկերությունը մտահոգված է նաեւ մրցակիցների՝ իրավական առումով ավելի կայացմամբ. «Որպես Հայաստանի իրավական դաշտում խաղացող, մենք խիստ կարեւորում ենք մեր մրցակից ընկերությունների պրոֆեսիոնալ կայացումը, քանի որ համոզված ենք, միայն ընդհանուր իրավական էթիկայի կանոնները հարգելով մենք կարող ենք ունենալ կայացած իրավական դաշտ եւ ազատ շուկայական հարաբերություններ», ասաց Սարգսյանը: Խոսելով կոնկրետ սեմինարի նպատակներից՝ «Ամերիա գրուպի» իրավական հարցերով տնօրենը նկատեց, որ այն միտված է՝ «բարելավելու իրավաբանի աշխատանքը հաճախորդի հետ, հնարավորինս փոխելու հաճախորդի ընկալումը իրավաբանի աշխատանքի նկատմամբ եւ առհասարակ՝ նպաստելու մեր երկրում էթիկայի նորմերի կիրառմանն ու պահպանմանը՝ իրավական գործունեություն իրականացնելիս»:**

**Ալեքսանդր Խվոշինսկին, նշեց, որ իրենց սեմինարները՝ Հայաստանում հավանաբար կլինեն շարունակական. «Ինչ-որ բան ինձ հուշում է, որ ես հաճախ եմ լինելու ձեր երկրում», նշեց ռուս իրավաբանը՝ հավելելով, որ տվյալ՝ առաջին սեմինարը կտեւի մոտ 4 ժամ. «Չնայած ես անձամբ ավելի երկար կաշխատեի, պարզապես պետք է նախապատրաստվել Հայաստան-Ռուսաստան ֆուտբոլային հանդիպմանը», եզրափակեց Խվոշինսկին:**

**Հ. Ա.**

## ԴԱՏ

# Արզաքանցյանն ընդդեմ «Երկիր» օրաթերթի

**Կենտրոնի եւ Նորք-Մարաշի ընդհանուր իրավասության դատարանում, դատավոր Ռուբեն Ափինյանի նախագահությամբ, երեկ տեղի ունեցավ ԱԺ պատգամավոր Տիգրան Արզաքանցյանի՝ «Երկիր» օրաթերթի դեմ հայցով դատական առաջին նիստը: Պատգամավորը պնդում է, թե օրաթերթն իրեն զրպարտել է ու անձը վիրավորել: Ըստ «Երկիր» կայքէջի՝ դատական առաջին նիստն անցավ «բարիդրացիական» մթնոլորտում. հայցվոր կողմը ներկայացրեց իր պահանջները, իսկ պատասխանող կողմը սիրով պատասխանեց բարձրացված հարցերին:**

**Հայցվոր կողմի փաստաբան Վահե Հովսեփյանը (ի դեպ, Տիգրան Արզաքանցյանը ներկա չէր դատին) դատարանին ներկայացրեց, որ հայցվորը հատկապես վիրավորվել է «էն լակոտը», «ավելի հասկանալի խոսում է հայրենի Քյավառա բարբառով» եւ «տիպյագ» բառերից:**

**«Իսկ եթե, օրինակ, «տիպյագ» բառի փոխարեն թերթում գրվեր պճնամոլ կամ տարազամոլ, դա վիրավորանք չէի՞ք համարի»,- հայցվորին հարցրեց դատավորը՝ ի պատասխան լսելով փաստաբան Հովսեփյանի բողոքը. «Հարգելի՛ դատարան, դե գոնե մոդայիկ գրվեր»:**

**Հայցվոր կողմը զրպարտություն է համարում պատգամավորի մասին նյութում տեղ գտած «Ինքնաթիռով գեղեցկուհիներ է տանում-բերում», «Հայտնի է՝ որպես կազինոների մշտական այցելու», «Շարունակ ծեծ ուտելու սովորությունը», «Ծեծ է կերել եւ ամեն անգամ ծեծվելուց հետո», «Նախորդ նստաշրջանում մեկ անգամ է երեւացել ԱԺ-ում» արտահայտությունները:**

**Իսկ ըստ պատասխանող կողմի՝ հայցվորի նշած թե՛ «վիրավորանքները», թե՛ «զրպարտությունները» փաստ են եւ իրականություն: Այդ կապակցությամբ «Երկիր»-ի փաստաբան Լիանա Գրիգորյանը դատարանին ներկայացրեց նաեւ ռուսական եւ հայկական լրատվամիջոցներում տպագրված հոդվածներ, որոնք վերաբերում են Տիգրան Արզաքանցյանին:**

**Նյութերն աչքի անցկացնելուց հետո դատավոր Ափինյանը, դիմելով փաստաբան Հովսեփյանին, հարցրեց, թե նա չգիտի՞, որ բազմաթիվ նյութեր են տպագրվել Տ. Արզաքանցյանի մասին: Պարզվեց, որ փաստաբանը տեղյակ չէ:**

**Դատավոր Ռ. Ափինյանը նիստը հետաձգեց մինչեւ ապրիլի 11-ը. պատասխանող կողմը կներկայացնի առաջին դատական նիստի ընթացքում բարձրացված բոլոր հարցերի ապացույցներ:**

# Ձեռնարկությունների գրանցումը 15 րոպեի ընթացքում

**Երեկ բացվեց արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կենտրոնը, որտեղ ներդրվել է «մեկ պատուհան» սկզբունքը: Դրա շնորհիվ քաղաքացին այլեւս թյուն ունեն համադրելու, եւ քաղաքացու վրա լրացուցիչ բեռ չի դրվի: «Սա ստեղծելու է ավելի բարենպաստ միջավայր ՀՀ-ում բիզնեսով զբաղվելու համար», նշեց Տիգրան Սարգսյանը:**



**տիպված չի լինի ընկերություն գրանցելիս այցելել մի քանի պետական կառույցներ:**

**Ելույթ ունենալով կենտրոնի բացման ժամանակ՝ վարչապետ Տիգրան Սարգսյանը շեշտեց, որ այսուհետեւ ձեռնարկությունների գրանցման գործընթացը Հայաստանում կատարվելու է առավելագույնը 15 րոպեի ընթացքում, «ընդ որում՝ էլեկտրոնային եղանակով գրանցումը հնարավորություն է տալու, որ քաղաքացիները կարողանան ձեռնարկություն գրանցել՝ նույնիսկ չայցելելով գործակալություն»: Ըստ վարչապետի, վեց գերատեսչությունների տվյալների բազաներն այսուհետեւ կենտրոնի մասնագետները հնարավորու-**

**Կառավարության աշխատակազմի ղեկավար Դավիթ Սարգսյանը, խոսելով էլեկտրոնային գրանցման համակարգի մասին, տեղեկացրեց, որ իրականացված բարեփոխումը ոչ միայն մեկ պատուհանի սկզբունքով սպասարկվող այս սրահի ստեղծումն է, այլեւ էլեկտրոնային համակարգի ներդրումը: Դա նշանակում է, որ բիզնեսի գրանցման հայտերը կստացվեն նաեւ էլեկտրոնային եղանակով՝ www. e-registr.am կայքի միջոցով: «Տնից դուք կարող եք ձեր համակարգչից հայտ ներկայացնել եւ բիզնես գրանցել: Այսպիսով գրանցման ժամանակահատվածն էապես կրճատվում է, եւ դա վերաբերում է թե՛ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ գրանցելուն, թե՛ անհատ ձեռնարկատերի գրանցման վկայական ստանալուն», նշեց Դավիթ Սարգսյանը:** **Ա. Մ.**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Ազգային ժողովի երեկվա ճեպազրույցներում լրագրողների առաջարկով խորհրդարանականները գնահատեցին ԵԱՀԿ Մինսկի խմբի դաշտային առաքելության մասին զեկույցը: ՀՀԿ խմբակցության ղեկավար **Գալուստ Սահակյանը** դրական գնահատեց այն: Երբ լրագրողները հետաքրքրվեցին, թե ինչն է դրական, երբ խոսքը «օկուպացված» տարածքների մասին է, Գ. Սահակյանը չհամաձայնեց՝ ասելով, որ ուժի չկիրառման մասին է վերուշին այնտեղ խոսքը ադրբեջանական տեղեկատվության վերաբերյալ է անվստահություն հայտնվում. ադրբեջանցիները անընդհատ ասում են, թե այդ տարածքները ատոմային թափոնների ու թմրամոլության գոտիներ են, մինչդեռ զեկույցում նշված է, որ այդ տարածքներում սովորական կյանքով ապրող, հող մշակող խաղաղ ժողովուրդ է ապրում. «Ամենակարեւոր հանգամանքներից մեկն այն է, որ զեկույցում նշվում է, որ այդ շրջանակներում բոլոր կողմերի մասնակցության խնդիր է առաջանում: Այսինքն՝ պահն է եկել, որ արդեն իսկ ԼՂ հիմնախնդրին որպես կողմ՝ օրինական ձեւով ներկայացվում է ԼՂՀ մասնակցությունը», ասաց նա, նշելով, թե նույնիսկ խոսք կա, որ փաստահավաք խումբը կարող է նաեւ այլ շրջաններ գալ. «Իսկ մնացածները՝ օկուպացիա եւ նման արտահայտությունները, վերագրումները, կարելի է տարբեր ձեւով հասկանալ. մենք էլ հասկանում ենք, որ նայելու են նաեւ Ադրբեջանի կողմից օկուպացված մեր տարածքները: Խոսքը Գետաշենին, Շահումյանին եւ այլ տարածքներին է վերաբերում: Բնական է, մենք չենք ասում՝ ծափահարում ենք եւ ուրախանում ենք: Չենք ասում, որ դա այն խնդիրն է, որ լուծումները կան: Պարզապես ասում ենք՝ դրական միտումներ կան...»: Վերաբնակեցնելու առումով խնդիր Գ. Սահակյանը տեսնում է, սակայն վերաբնակեցնելու կամ բնակչության թիվն ավելացնելու համար միայն հայրենասիրական կամ բարոյականության կոչերը քիչ են, ֆինանսական միջոցներ են անհրաժեշտ: Նույն հարցի վերաբերյալ ԲՀԿ-ից **Նաիրա Զոհրաբյանը** նշեց, թե ի գիտություն են ընդունում համանախագահների հայտարարությունները, բայց եւ անհամաձայնություն հայտնեց զեկույցի որոշ ձեւակերպումներին, նկատելով, թե ժամանակն է, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հայտարարությունները լինեն ավելի հասցեական, նրանք իրենց հայտարարություններում վեր կանգնեն շատ ընդհանրական, երբեմն ոչ ճշգրիտ ձեւակերպումներից: Զոհրաբյանին դուր չի գալիս ռազմատենչ հայտարարություններից զերծ մնալու ընդհանրական կոչը՝ չնշելով, թե այդ կոչի հեղինակը ո՞ր կողմն է. «Եթե կոչ է արվում ձեռնպահ մնալու ռազմական բյուջեն մեծացնելուց՝ չնշելով, թե կոնկրետ ո՞ր երկիրն է ամեն օր սպառնում, որ իր ռազմական բյուջեն մի քանի անգամ պիտի գերազանցի Հայաստանի բյուջեից, ապա ինձ համար անհասկանալի է, թե ինչի՞ կարող են բերել ԵԱՀԿ համանախագահների ոչ հասցեական հայտարարությունները», ասաց Զոհրաբյանը: Նրա համար անհասկանալի էր նաեւ ԵԱՀԿ գործող նախագահի էնոցիոնալ պոռթկումը Հայաստանում՝ կոչը՝ շփման գծից հետ կանչել դիպուկահարներին, երբ Ադրբեջանն է հրաժարվում այդպիսի առաջարկներից: ՀՅԴ խմբակցության ղեկավար **Վահան Հովհաննիսյանը** ԵԱՀԿ դաշտային առաքելության զեկույցին լուրջ չնայեց: Ըստ նրա՝ միջազգային հանրությունը Ղարաբաղը որպես օկուպացված տարածք չի դիտում, բայց Ղարաբաղ ասելով հասկանում է նախկին ԼՂԻՄ-ը, իսկ մենք հասկանում ենք ԼՂՀ, որը սահմանադրությամբ ամրագրել է վերահսկողությունը մնացած տարածքների վրա: Բայց նաեւ խայտառակ բան է, որ այդ տարածքները ավերված են մինչեւ այժմ, իսկ այդ տարածքներում վերաբնակեցման ծրագիր չի իրականացվում Հայաստանի մեղքով՝ Հայաստանի իշխանությունները միայն վերաբնակեցնելու ոչ լիարժեք փորձեր են կատարում: Իսկ չվերաբնակեցված լինելը ադրբեջանցիների բերանը լկտի լեզու է դնում: Մինչդեռ վերաբնակեցված լինելու դեպքում ե՛ւ Ադրբեջանը, ե՛ւ միջազգային հանրությունն այլ վերաբերմունք կդրսեւորեին: ՕԵԿ-ից **Հովհաննես Մարգարյանն** էլ վստահեցրեց, թե այսօր աշխարհն էլ է տեսնում, որ կան տարածքներ, որոնք ապահովում են ԼՂ անվտանգությունը:

### Ի դեպ

Այս փառօրյայում քննարկված կոալիցիոն եւ ՀՅԴ-ի ընտրական օրենսգրքի նախագծերից ընդունվեց կոալիցիոնը, իսկ ՀՅԴ-ինը մերժվեց: Այս առիթով ՀՅԴ խմբակցության ղեկավար Վահան Հովհաննիսյանը գնահատեց, թե ՀՅԴ-ն բանավեճում հաղթանակ տարավ, իրենց առաջարկների հակափաստարկներ չեն ներկայացվել, ով շատ ձեռք ուներ՝ ավելի շատ կոճակ սեղմեցին, մասների քանակը հաղթեց. «Դա բիոմասսայի հաղթանակ էր... Ժողովրդավարությունն այն չէ, որ բիոմասսան, ումը որ շատ է, միշտ ճիշտ է, ժողովրդավարությունն այն է, երբ շատ է ընդունվում փոքրամասնության ճշմարտությունը: Հայաստանում դա տեղի չի ունենում, ու դա է, որ գրգռում եւ ժողովրդին հանում է հրապարակներ». սա ասվեց այն առիթով, որ քվեարկության ցուցակների հրապարակումը մեծամասնությունը մերժեց, մինչդեռ թույլատրվող ընթացիկ տեսանկարահանումը ցույց է տալիս, թե ո՞վ գնաց ընտրության, իսկ ցուցակների հրապարակումը՝ ո՞վ չի գնում: Վ. Հովհաննիսյանը (ՀՅԴ-ն) դեմ է մեծամասնական ընտրակարգին, իսկ մեծամասնությունը կողմ է 90:41 հարաբերակցությանը. «Մենք ունենք 41 մեծամասնական համակարգով ընտրված պատգամավոր, որոնցից 29 ծոցում չեն հանել ընտրվելու պահից՝ ոչ հարց են տվել, ոչ հայտարարություն արել, ոչ էլ գրավոր հարցումով են դիմել, ոչ էլ ելույթ ունեցել: 7-ը համեմատաբար ակտիվ են, 5-ը հանել են 1 կամ 2 ծոցում, ասենք՝ գյուղի ջրատարի մասին հարց են տվել: Հիմա այս 41-ի էֆեկտիվությունը ո՞րն է: Ժողովրդի կախվածությունը էս մարդկանցից, հավասը նրանց նկատմամբ այս մարդկանցից ինչո՞վ պիտի պայմանավորված լինի, ծոցումների քանակո՞վ: Եթե այդպես է, նրանք ընդհանրապես պառլամենտական կյանքում չկան: Դրա համար այդ փաստարկը ոչ մի գրոշ չարժե», ասաց նա:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# ԵԱՀԿ դաշտային առաքելության զեկույցը՝ խորհրդարանականների հայացքով

# Համագործակցել նաեւ երեխաների հետ

Երեւանում մեկնարկել է «Տարածաշրջանային նախաձեռնություն հանուն երեխաների մասնակցության» ծրագիրը, որը ֆինանսավորում է Եվրոմիությունը: Ծրագիրն իրականացնում է «Save the children» միջազգային կազմակերպությունը՝ համագործակցությամբ «Ապագան քոնն է» ՀԿ-ի հետ: Ծրագրի նպատակն է նպաստել Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի երեխաների կարողությունների զարգացմանը: Հայաստանում այն կգործի Երեւանի ու Արարատի, Արմավիրի,Կոտայքի, Արագածոտնի, Գեղարքունիքի մարզերի 20 դպրոցներում, օգտվելու են շուրջ 10 հազար երեխաներ:

Երեկ «Կոնգրես» հյուրանոցում «Save the children» կազմակերպության հայաստանյան գրասենյակի տնօրեն **Իրինա Սաղոյանը** հակիրճ ներկայացրեց ծրագիրը, այնուհետեւ նշեց. «Մեծահասակները պետք է սովորեն համագործակցել երեխաների հետ»: Կրթության եւ գիտության նախարարության հետ «Save the children»-ը համաձայնագիր է ստորագրել ծրագիրը համատեղ իրականացնելու վերաբերյալ:

Երեկ ծրագրի շնորհանդեսին նաեւ ներկա էր ԱԺ առողջապահության, մայրության ու երեխաների հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ **Արա Բաբլոյանը**: Իր խոսքում նա նշեց, որ վերջերս եղել է Նորվեգիայում, ու որքան էլ զարմանալի է, նույնիսկ այդպիսի զարգացած երկրում երեխաները խնդիրներ ունեն: Նորվեգիայում կա երեխաների իրավունքների պաշտպան՝ օմբուդսմեն:

Այնպես որ, երեխաներին հարկավոր է լուրջ վերաբերվել, քանի որ նրանք եւս իրավունքներ ունեն: Եվ ինչպես նշեց Հայաստանում Եվրոմիության պատվիրակության գործառնական բաժնի ղեկավար **Ժան-Քրիստոֆ Գերանդը**. «Մեծահասակները մոռանում ենք, որ մենք նույնպես երեխաներ ենք եղել»:

Ի. Պ.

# Կապանում խմելու ջրի մանրէաբանական շեղումները հասնում են 93 տոկոսի

Առողջապահության նախարարության հիգիենիկ ու հակահամաճարակային տեսչության Սյունիքի մարզում իրականացրած մանրէաբանական հետազոտություններով պարզվել է, որ խմելու ջրում հայտնվել են մանրէաբանական շեղումներ: «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի հարավային մասնաճյուղից սպասարկվող մարզի 15 քաղաքային եւ 11 գյուղական համայնքներում ամենաբարձր շեղումներն են արձանագրվել Մեղրիում՝ 41 տոկոս, ամենացածրը՝ Սիսիանում՝ 5 տոկոս: Կապանում եւ Գորիսում շեղումները եղել են 13 տոկոս: Մարզի մյուս համայնքներում, որոնց ջրամատակարարումն իրականացնում են համայնքային ենթակայության ջրմուղները, մանրէաբանական շեղումների մակարդակը գերազանցում է 23 տոկոսը:

Ընդհանուր առմամբ, Կապանի գյուղական համայնքներում խմելու ջրի շեղումները հասնում են 93 տոկոսի, երկրորդ տեղում Մեղրին է՝ 83 տոկոս, Գորիսում՝ 57, իսկ Սիսիանում՝ 5 տոկոսի: Հետազոտությունների արդյունքներին ծանոթանալուց հետո մարզի բոլոր համայնքներին առաջարկություն է ներկայացվել մինչեւ եղանակների տաքանալը կազմակերպել իրենց համայնքների ջրառների, ջրավազանների մաքրման ու ախտահանման աշխատանքներ:

Հ. Հ.



# «Առաջին գիշերն է, որ «լույս համարում» քնեցի»

**Նախորդ օրը վրան էր տեղադրվել Ազատության հրապարակում հացադուլ անող Րաֆֆի Հովհաննիսյանի համար: Երեկ՝ իր հացադուլի 11-րդ օրը, Ր. Հովհաննիսյանը նկատեց, թե տեղադրելով վրանը՝ քաղաքացիները պաշտպանեցին մարդու իրավունքը եւ դարձան ՀՀ քաղաքացիներ. «Իմ երախտագիտությունն եմ հայտնում բոլորին եւ մեղքի որոշակի զգացում ունեմ, որովհետեւ առաջին գիշերն է, որ «լույս համարում» քնեցի, բայց դա ժողովրդի պահանջն էր: Նա շնորհակալություն հայտնեց բոլորին՝ ՀԿ-ների այն ներկայացուցիչներին, ում նախաձեռնությամբ տեղադրվել էր վրանը, մարդու իրավունքների պաշտպանին, անգամ ոստիկաններին, որոնք մինչեւ լուսաբաց վրանը չեն վերացրել: Նա նշեց, որ արդի Հայաստանի ժողովրդի պահանջն է իշխանության արտահերթ, օրինավոր եւ նորովի ձեւավորումը: Ո՞ր դեպքում նա կդադարեցնի հացադուլը: Ր. Հովհաննիսյանն իրեն ուղղված այս հարցին պատասխանելով՝ հղում արեց «Ժառանգության» կայքէջին, պաշտոնական պահանջներն այնտեղ են, իսկ ընդհանրապես՝ հացադուլ է անում ակնկալելով, որ իշխանություններն իրենց խիղճը, խելքը, քաղաքացիական գիտակցությունը, պետության նկատմամբ պատասխանատվությունը կօգտագործեն արմատապես փոխելու իրենց մոտեցումները: Չնայած ինքը չէ, որ իշխանության փոխարեն պետք է որոշում կայացնի, բայցեւ՝ իշխանության չկամության պարագայում կընկնի հիվանդանոց. «Դրա համար իմ որոշումը կամայական է, քաղաքացիական, ու ոչ մի պահանջի կատարում չի բերի հացադուլից դուրս գալուն, երբ Աստված ինձ ասի՝ բավ է, կամ որպես քաղաքացի ես տեսնեմ՝ ի՞նչ է տեղի ունենում հրապարակում... իսկ հրապարակում վերջին տասն օրը տեղի ունեցողը հուշում է, որ մենք մտնում ենք նոր հանգրվան, որը պահանջում է նորովի նվիրվել Հայաստանի ազատության իրավունքին եւ ազգային շահին», ասաց Ր. Հովհաննիսյանը՝ հավելելով սակայն, որ եթե Հայաստանի գործող նախագահը կամ մեկ այլ բարձրակարգ պաշտոնյա մոտենա եւ հարցերի արմատական լուծումներ խոստանա, նա տեղում կարող է վերանայել իր մոտեցումները: Ր. Հովհաննիսյանը նաեւ անդրադարձ արեց խիստ ընդդիմադիր լրատվամիջոցների՝ իր եւ ընտանիքի վերաբերյալ այնպիսի ստեր եւ հերյուրանքներ հնչեցնելու փաստին, որ բարոյականություն եւ տարրական էթիկա ունեցող որեւէ մեկն իրեն թույլ տալ չէր կարող: Ըստ նրա՝ եթե իշխանափոխություն լինի, եւ ա՛յդ որակը գա՝ ուրեմն դա մեզ բնավ պետք չէ. «Փոփոխությունը քաղաքական դաշտում, ընդդիմադիրների եւ լրագրության մեջ պետք է լինի հիմա, որակապես պրոֆեսիոնալ ձեւով եւ բարոյականությամբ, մասնագիտական բարձր չափանիշով: Իսկ թե ոչ՝ կփոխարինենք իշխանությունն ընդդիմությամբ, եւ իրենք կշարունակեն նույն որակներով»:**

**Մ. Խ.**



ՖՈՏՈԼՈՒՐ

# ԱԺ նախագահն ու կոալիցիայի ներկայացուցիչները այցելել են Րաֆֆի Հովհաննիսյանին

**Երեկ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը այցելել է Ազատության հրապարակում հացադուլի մեջ գտնվող «Ժառանգություն» կուսակցության առաջնորդ Րաֆֆի Հովհաննիսյանին:**

**Հովիկ Աբրահամյանն ասել է, թե Րաֆֆու տեղը խորհրդարանում երեւում է, եւ հորդորել է դադարեցնել հացադուլը, բացի դրանից՝ լավ կլիներ Ընտրական օրենսգրքի նախագծերի քննարկմանը «Ժառանգության» պատգամավորները ներկա լինեին: Րաֆֆի Հովհաննիսյանը շնորհակալություն է հայտնել այցի համար՝ ասելով, թե հաճելի էր ԱԺ նախագահի հետ հանդիպել Ազատության հրապարակում: Մինչ ԱԺ նախագահի՝ Ազատության հրապարակ այցելելը Ր. Հովհաննիսյանին այցելել էին նաեւ ՀՀԿ, ԲՀԿ ու ՕԵԿ պատգամավորները: Առավոտյան ճեպազրույցների ժամանակ ԲՀԿ-ից Նաիրա Զոհրաբյանն ասել էր, թե այցելելու են Հովհաննիսյանին՝ նրան փոխանցելով Գագիկ Ծառուկյանի հորդորը՝ հացադուլը դադարեցնելու: Իսկ ԲՀԿ նախագահը 2012-ի օլիմպիական խաղերին նվիրված շնորհանդեսից հետո Ր. Հովհաննիսյանի հացադուլի առիթով ասել է. «Ամեն մարդ իրավունք ունի պաշտպանելու իր ծրագրերը, ինչը ես գնահատում եմ: Նա խորհրդարանի մեր գործընկերն է, բոլորը նրան ճանաչում են որպես քաղաքական գործչի: Ես խոսքս ուղղում եմ նրան եւ իմ խմբակցությանն եմ տեղյակ պահել, որ ինքը դադարեցնի հացադուլը, որովհետեւ դա իր առողջության, կյանքի համար վտանգավոր է: Երկրում կան խնդիրներ, որոնք պետք է լուծվեն, բայց ա՛յդ ձեւով կարիք չկա, քանի որ կարելի է հանդուրժողական, աշխատանքային գործընթացով, խորհրդարանում ամբողջ խմբակցություններով համախմբվեն, նստեն, լսեն՝ ի՞նչ կարելի է անել, ո՞նց պետք է լուծվի եւ ի՞նչն է չլուծվելու պատճառը»:**

**Մ. Խ.**

# Հովհաննիսյանների երախտագիտության խոսքը

**Ես և իմ հինգ զավակները՝ Կարինը, Տարոնը, Վանը, Շուշին և Արմենը, մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում այն կազմակերպություններին և անհատ քաղաքացիներին, որոնք՝ արհամարհելով բոլոր հնարավոր վտանգները և հետապնդումները և դրսեւորելով բացառիկ խիզախություն ու քաղաքացիական կամք՝ պաշտպանեցին Րաֆֆիի՝ մարդու հիմնական իրավունքները: Իրենց իսկ ձեռքերով Ազատության հրապարակում բարձրացնելով վրանը, նրանք վերականգնեցին այն վեհ գաղափարը, որի անունով կոչվում է հրապարակը՝ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ:**

ԱՐՄԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# Հանճարը շրջվում է գերեզմանում

## Բաց նամակ Երեւանի քաղաքապետ Կարեն Կարապետյանին

Հանկարծ «Արմենիա»-ի էլեկտրոնային փոստով սկսեցին ինձ հասնել նամակներ, որոնցով հիշեցնում էին իմ խոստումը՝ բաց նամակ գրել Երեւանի նորանշանակ քաղաքապետ Կարեն Կարապետյանին: Խոստովանում եմ, նման բան խոստացել եմ: Ճիշտ է, չեմ հիշում, թե երբ ու որ կետում էր դա: Թվում է, ո՛չ աշխարհաշուրջն է հարմար ժամանակ, եւ ո՛չ էլ առագաստանավի տախտակամածը՝ հարմար տեղ, որպեսզի բավական չէ նամակագրական ժանրով զբաղվեմ, դեռ բարձրացնեմ նաեւ այնպիսի մի բազմաբարդ եւ հիրավի դրամատիկական հարց, ինչպիսին է Երեւանի ճակատագիրը: Տեղն իրոք այն չէ: Գրամեքենայիս փոքրիկ սեղանիկի եւ նահճակալիս արանքով հազիվ կարելի է կողքանց խցկվել: Իսկ այ, ինչ վերաբերում է ժամանակին, ժանրին ու թեմային, ապա ինքս ինձ հետ համաձայն չեմ: Վերջիվերջո, մենք ապրում ենք ոչ սած գլխավոր քաղաք, այլ կա թունավոր մուր արտաշնչող մի հսկայական մեգապոլիս, որը ներառել է եւ Աբովյանը, եւ Չարենցավանը, եւ Աշտարակը, եւ Էջմիածինը ու մի քանի տասնյակ նախկին բնակավայրեր, որոնք կորցրել են իրենց հինավուրց պատմական անվանումները: Եվ այդ ամենն արդեն մեկ միասնություն է: Նրանք միմյանց հետ կապված են ոչ թե ճանապարհներով, այլ փողոցներով: Այնպես որ, հաշվեք ու կհամոզվեք, որ երեք միլիոնանոց երկրի իրական մայրաքաղաքում ապրում է ավելի քան երկու միլիոն մարդ: Այդպիսի ցնորական պաթոլոգիա գոյություն չունի աշխարհի եւ ոչ մի երկրում: Եվ այդպիսի հարմար թիրախ մի որեւէ թշնամու համար նույնպես ոչ մի տեղ չես գտնի, մանավանդ որ մեր աթոռանիստ քաղաքից բոլորովին ոչ հեռու գտնվում է ոչ թե մի ինչ-որ Դիսնեյլենդ, այլ ատոմային էլեկտրակայան, որի մասին մենք տագնապով ենք հիշում ինչպես մեր երկրաշարժից, այնպես էլ ճապոնական ցունամիից հետո: Դե լավ, չվախեցնենք միմյանց: Շատ ավելի ճիշտ կլինի գործում կերպով մտածել, թե ինչպես ենք դուրս գալու այս իրավիճակից:

Սակայն, ավաղ, իրական գործողությունների համար մենք դեռ չենք հասունացել: Ինչպես ասում էին հնաշխարհի փիլիսոփաները, գիտակցված գործելու համար հարկավոր է փաստարկներ կուտակել: Այնպես որ, իմ առաջին նամակում կխոսենք այդ փաստարկների մասին: Դրա համար, ինչպես դարձյալ փիլիսոփաներն էին ասում՝ պետք է հիշել, որ ճշմարտության չափանիշը պրակտիկան է: Վերցնենք, օրինակ, Լիխտենշտեյն այսպես կոչված թզուկ պետությունը: Նա վաղուց գոյություն ունի Եվրոպայի քարտեզի վրա: Համենայն դեպս, վաթսուն տարով մեծ է ԱՄՆ-ից: Մակերեսը դեռ մի քիչ էլ զիջում է փոքրիկ Ջասկի կղզուն, որտեղ «Արմենիա»-ի անձնակազմը ծակ ու ծուկ չթողեց, որ չշրջեր ընդամենը մեկ լուսային օրվա ընթացքում: Իսկ պետք է նկատի առնել, որ մենք ֆիլմ էինք նկարահանում, ոչ թե հենց այնպես քայլում: Լիխտենշտեյնում ապրում է երեսուն հազար մարդ: Հիմա գուցե մի քիչ ավելի: Իսկ այ, նրա մայրաքաղաք Վադուցում՝ յոթ անգամ քիչ: Չորս հազար: Հիմա գոցե մի քիչ ավելի: Բայց գլխավորն այն է, որ չխախտվի հարաբերակցությունը հօգուտ քաղաքի: Ինչպե՞ս են դրան հասել: Շատ պարզ: Ինքը՝ իշխանը (Լիխտենշտեյնը իշխանապետություն է) նախաձեռնել է օրենք, որը մշակել եւ ընդունել է նրանց ազգային ժողովը՝ Լանդտագը. մայրաքաղաքի բնակչությունը կարող է աճել միայն ծնելիության հաշվին: Միաժամանակ պարզապես օրենքի ուժ է ստացել հողագործի պաշտամունքի ավանդույթը: Ազգային տնտեսության մեջ առաջին տեղում են կաթնասու անասնաբուծությունը եւ խաղողագործությունը: Դեռ շատ վաղուց Շվեյցարիայի մեր հայրենակիցները մի ամբողջ օրով ինձ տարան շրջելու Լիխտենշտեյնում, եւ ես մտապահեցի մի իմաստություն. հողագործն այնտեղ կարող է զրկվել իր գործընկերների հարգանքից, եթե իր մշակած դաշտը գեղեցիկ տեսք չունենա: Վերջերս, ճապոնական ցունամիի մասին ռեպորտաժում ես վկայակոչել էի Հայաստանի իսկական բարեկամ, ճապոնացի փիլիսոփա Հիրոսի Նոմայի բառերը, որը հղում կատարելով հին իմաստուններին, նույնպես խոսեց մշակված դաշտի գեղեցկության մասին: Չէ՞ որ խոսքն այստեղ մշակված դաշտի մասին չէ, այլ գյուղացու, հողագործի հոգու, առանց որի չկա երկիր, չկա տնտեսություն, չկա ժողովրդի ապագա:

Թանկագին Կարեն, Երեւանի մեծարգո քաղաքապետ, չէ՞ որ հարցը միայն Երեւանը չէ: Դեռեւս երեսնական թվականների սկզբին ողջ երկիրը (ԽՍՀՄ) վարչական կարգով բաժանեցին շրջանների: Երեսուն թվականին Հայաստանը բաժանվեց քսանհինգ շրջանի: Յոթ տարի անց ավելացան եւս հինգը, ապա եւս երկուսը: Ըստ Ստալինի, այդպես հարմար էր հետեւել յուրաքանչյուր քաղաքացու, որի մեջ նա թշնամի էր տեսնում: Պատկերացրու մի շրջան, որը խնձորի պես կիսում են երկու մասի: Այսինքն, իսկույն ավելանում են նոր շրջկոմ, շրջգործկոմ, ԿԳԲ, միլիցիա, կոմսոմոլ, ԴՕՍԱԱՖ, ՕԲԽՍՍ, ժողվերահսկողություն, մի խոսքով՝ չինովնիկական հսկայական ապարատ, որը ծառայողների կարիք ունի. սուրճ եփող անձնական քարտուղարուհիներ, անձնական վարորդ-կառապաններ, օգնականներ, խորհրդականներ եւ իհարկե՝ դատարան ու դատախազություն: Եվ ահա թե ինչն է զարմանալի. շրջանը երկու մասի բաժանելուց մեկ տարի անց ճիշտ երկու անգամ աճեց հանցավորությունը: Թեեւ զարմանալու բան չկա, չէ՞ որ իրավապահ մարմինները պետք է աշխատանք ունենային, եւ ահա հորինում էին ամեն տեսակի հանցանքներ ու օրինախախտումներ: Մի խոսքով, պետք էին այդ քարտուղարուհիները, որոնք գիտեին սուրճ եփել, այդ կառապաններն ու այդ հնարավոր հանցագործները: Որտե՞ղ գտնել նրանց: Իհարկե գյուղերում: Ողջ Հայաստանով մեկ, գերակատարելով պլանները, սփռված էին ստախանովական եռանդով աշխատող տնաշինական կոմբինատներ, եւ մեկ սերնդի աչքի առջեւ Երեւանն ընդարձակվեց: Ծնվեցին երեսունյոթ շրջկենտրոններ, որոնք վերածեցին քաղաքների ու ավանների:

Չորանում ու մեռնում էին հարյուրավոր հին հայկական գյուղեր՝ իրենց եկեղեցիներով, հայրական տներով, այգիներով, արոտավայրերով, գերեզմանոցներով, պատմական հիշողությամբ: Էլ չեմ խոսում իսկական ցեղասպանության մասին: Քանզի գյուղերում միջին հաշվով հինգ-յոթ երեխա էին ծնվում, իսկ քաղաքներում, լավագույն դեպքում՝ երկու-երեք: Հետո էլ երեք խոշոր քաղաքներ սկսեցին աճել, միմյանց հետ մրցելով մեր հումորով, մեր արտադրական հզորություններով: Լենինականը, Կիրովականը, Ստեփանավանը: Նրանք բոլորն էլ, ինչպես եւ ողջ Հայաստանը, վեր էին խոյացել բազմատոննանոց երկաթբետոնե կառուցվածքների հաշվին: Եվ մենք գիտենք, թե այդ ամենն ինչով ավարտվեց մեր սեյսմավտանգ գոտում: Հիշեցնեմ, պարոն քաղաքապետ, որ այդ նույն Լենինականում կանգուն մնացին բոլոր շենքերը, որոնք կառուցվել էին դեռ ցարի ժամանակ: Եվ պատահական չէր, որ հումորի զգացումը չկորցրած լենինականցիները աղետի առաջին իսկ օրերին նշեցին. «Լենինականը փլվեց, Գյումրին մնաց»: Ես երեք ամիս շարունակ, ամեն օր գնում էի աղետի գոտի, չբաժանվելով իմ նոթատետրից: Գրեցի «Դիմակայություն» գիրքը: Տասը տարի անց, կրկին աշխատելով դրա վրա, հրատարակեցի «Սպիտակի դասերը» վերնագրով: Ձեզ, որպես Երեւանի քաղաքապետի, կցանկանայի հիշեցնել շատերի կողմից մոռացված տվյալներն այն մասին, որ 1988 թվականի դեկտեմբերյան այդ ողբերգական օրը միայն Երեւանում տուժեցին մոտ երեք հազար շենքեր, որոնք պարտադիր ամրացման կարիք ունեին: Դա շատ լուրջ թեմա է, Կարեն ջան: Աստված չի ներում նրանց, ովքեր իմանալով դժբախտության մասին, չեն կանխում այն:

Կատարելով ընթերցողներին տված խոստումս Երեւանի քաղաքապետին բաց նամակ գրելու մասին, ես լավ գիտեի, որ մեկ ռեպորտաժի շրջանակներում չեմ կարողանա տեղավորել ողջ նյութը: Թեմային իրոք լրիվին տիրապետում եմ: Իմ «Ահեղ դատաստան» ծանրակշիռ գիրքը նվիրված է հենց Երեւանի խնդրին: Գլխավոր հերոսը պարտքի բերումով զրուցում է ֆրանսիացի ականավոր վիպագիր եւ գեղարվեստական հրապարակախոսության անգերազանցելի վարպետ Ֆրանսուա Մորիակի հետ, որն առաջինն է հետազոտել մեգապոլիսների ողջ ճակատագրական վտանգավորությունը: Այն ժամանակ՝ 20-րդ դարի կեսերին գտնում էին, որ մեգապոլիսների բոլոր քաղաքապետները պետք է դասեր առնեն Մորիակից: Դա անհրաժեշտ է, որպեսզի իրենց պաշտոնն զբաղեցնելուց անմիջապես հետո յուրացնեն գլխավոր ճշմարտությունը՝ ցանկացած պետություն վերջին հաշվով ժողովուրդն է: Իսկ ժողովուրդը չի կարող ապրել առանց կրքի: Բայց մայրաքաղաքը կիրքը զրկում է իր բնորոշ հատկանիշներից: Չի գոյատեւի այն ժողովուրդը, որը կհուսա, թե իր մշակույթը ծնվում է միայն մայրաքաղաքում: Քանզի ժողովուրդը միայն մշակույթ չէ, առավել եւս՝ գիտություն: Ժողովուրդը ե՛ւ բնավորություն է, ե՛ւ սիրելու, ե՛ւ թե նույնիսկ ատելու յուրօրինակ կարողություն...

Ես կարծում եմ, առիթ կլինի ձեզ եւ ձեր գործընկերներին ավելի մոտիկից ծանոթացնելու Ֆրանսուա Մորիակի իմաստուն խորհուրդներին: Իսկ առայժմ, ելնելով իմ տարիքի բարձրությունից եւ մեր տասներկուերորդ մայրաքաղաքի խնդիրների մասին կուտակված հրապարակախոսական նյութերի ծավալից, ձեզ մի խորհուրդ կտամ: Քաղաքի իսկական տերը պետք է ոչ միայն կառուցել իմանա, այլեւ՝ քանդել: Այո՛, այո, քանդել: Խոսքն ինչ-որ ավտոտնակների, հարակից շինությունների կամ ցանկապատերի մասին չէ: Խոսքն այն հանճարի հեղինակային իրավունքների մասին է, որը, Չարենցի բառերով ասած, տեսել էր արեւի քաղաք, միայն «Արմենիա-Հայաստան»-ում, այլ նաեւ Հայաստանում: Համաձայն միջազգային ծովային իրավունքի՝ տախտակամածը հայրենիքի մի մասն է, իսկ նավն ու անձնակազմը՝ հայրենիքի մասնիկը: Չորս ամիս արդեն ճանապարհին ենք, թերեւս մի այդքան էլ կլինենք: Այնպես որ, այս ողջ ընթացքում մտքերս միայն հայրենիքի հետ են:

Իսկ ինչ վերաբերում է նոր քաղաքապետին բաց նամակ գրելուն, թերեւս չարժե դրա մեջ ինչ-որ անսովոր բան տեսնել: Պետք չէ, ինչպես լրագրողներն են ասում՝ որեւէ թեժ բան սպասել: Հարցն այն է, որ ոչ միայն Երեւանի, այլեւ ուրբանիզացման խնդրի մասին ընդհանրապես ես թերեւս միշտ էլ գրել եմ: Ինձ համար այդ հարցը հիրավի շեքսպիրյան է՝ լինել, թե՞ չլինել: Այնպես որ, համարենք, թե քաղաքապետին ուղղված նամակն արդեն սկսել եմ:

Ես վաղուց եմ ուշադրություն դարձրել (դեռեւս լեգենդար Գրիգոր Հասրաթյանի եւ Մուրադ Մուրադյանի ժամանակներից), որ մենք մի ինչ-որ անսանձ հպարտությամբ ենք ընդունում այն փաստը, որ Երեւանը միլիոնանոց քաղաք է: Իսկ ինչպե՜ս էինք խորհրդային ժամանակներում սպասում այդ թվին, դրա մեջ չտեսնելով մահացու չարիքը: Երբ կուսակցական եւ խորհրդային առաջնորդները այդ նույն վեց զրոն նվաճելու առիթով շամպայն էին բացում, ապա ոչ մեկի մտքով չէր անցնում, որ շուտով, շատ շուտով Երեւանի շուրջը պարտադիր կարգով աճելու են, ինչպես սնկերն ՝ անձրեւից հետո, երկաթբետոնե այլանդակ երկվորյակներ, որ բացի ամենայնից, աղավաղելու էին հին հայկական ճարտարապետության ոճն ու ավանդույթները: Եվ եթե դուք, թանկագին Կարեն, ասենք՝ դելտապլանով կամ ուղղաթիռով դանդաղ թռչեք Երեւանի վրայով, ապա կհամոզվեք, որ գոյություն չունի մեր երկրի այսպես անկյուն, նկատի ունենալով առանձնապես Օպերային թատրոնը: Խնայե՛ք անմոռանալի Ալեքսանդր Թամանյանի հիշատակը, որի հոգին չի կարող հանգիստ գտնել այնտեղ՝ երկնքում, իսկ մեղսավոր մարմինն, ինչպես ասում են, անդադար շրջվում է դագաղում այն գիտակցությունից, թե ինչ է կատարվում իր կերտած Երեւանում, մանավանդ Օպերային թատրոնի շուրջը: Միայն քանդել: Միայն վերականգնել այն, ինչ մտահղացված էր Արեւի Քաղաքի հեղինակի կողմից: Եվ դա պետք է անել խորամտորեն, տալով ժամկետ՝ մեկ, երկու, հինգ տարի, ընդունելով համապատասխան օրենք, որի համաձայն շինությունների տերերը (ինչպես փայտե, այնպես էլ՝ երկաթբետոնե) չեն տուժի: Նման մոտեցման դեպքում, կասկած չունեմ, նրանք իրենք առաջինը բահ ու լինգ կվերցնեն:

Իսկ ինձ մնում է միայն ավելացնել, որ իմ այս բաց նամակի թեման ես կշարունակեմ թեկուզ նրա համար, որպեսզի հիշեցնեմ բոլորին ու ինքս ինձ իմաստուն Մորիակի մասին, որը մահից ոչ շատ առաջ ասել է. «Իմ Փարիզն արդեն թշնամական է ընտանիքին: Իսկ գավառը դեռեւս պահպանում է կրակն ընտանեկան օջախներում: Բայց որքա՞ն ժամանակով»:

**ԶՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ**
**«Արմենիա» առագաստանավ, Խաղաղ օվկիանոս**

***

***Հիանալի նորություն ունենք: «Արմենիա»-ի հայրիկների թիվը մեկով էլ ավելացավ: Ծնվեց ղեկավար Վահագն Մաթեւոսյանի Հայկ որդին (քաշը՝ 3 կգ 150 գ, հասակը՝ 51 սմ): Այդ մասին մեզ տեղեկացրեց Մոր եւ մանկան առողջության պահպանման ԳՀԿ տնօրեն, բժշկագիտության դոկտոր, պրոֆեսոր Գեորգի Օկոեւը:***

Զ. Բ.

# Լարա Սեդրակյանը՝ Դուբայի «Բլումբերգ» (Bloomberg) հեռուստատեսության լրագրող

Մարտի 18-ին «Բլումբերգ» հեռուստատեսությունը պաշտոնապես ծանուցել է, որ **Լարա Սեդրակյանը** Դուբայի ABC նյուզից իրենց մոտ է տեղափոխվում: Պարսից ծոցի երկրների գիտակ Լարան վերջին ռեպորտաժները պատրաստել է Սաուդյան Արաբիայից, Կահիրեի Թահրիր հրապարակից, Մերձավոր Արեւելքի անհանգիստ տարածաշրջանից: Նա լուսաբանել է 2009-ի իրանական նախագահական ընտրությունները, անդրադարձել Սաուդյան Արաբիայի էներգետիկ գներին, Դուբայի ֆինանսական ճգնաժամին եւ տնտեսության ու քաղաքականության այլ կարեւորագույն թեմաների: Սեդրակյանն աշխատելու է «Բլումբերգի» լուրերի բաժնի խմբագրությունում, որն այս պահին ընդլայնվում է՝ դառնալով Մերձավոր Արեւելքում ամենամեծ գրասենյակը: «Բլումբերգ» հեռուստատեսությունը աշխարհում ավելի քան 250 միլիոն ընտանիքներում է հեռասփռվում՝ դառնալով աշխարհի խոշորագույն լրատվամիջոցներից մեկը, որ ուղիղ եթերում ռեպորտաժներ է ներկայացնում տնտեսության եւ քաղաքականության արդի վիճակի մասին:



«Լարա Սեդրակյանը փորձառու լրագրող է՝ Պարսից ծոցի երկրների լրատվական կարեւոր թեմաների խոր իմացությամբ, ասել է հեռուստատեսության խմբագիր Մելքոլմ Ֆրիիդը: Նրա կապերն ու գիտելիքները մեր աշխարհասփյուռ ակնդիրին հնարավորություն կտան քաղաքականության եւ տնտեսության վրա մերձավորարեւելյան ազդեցությունը որպես եզակի հնարավորություն տեսնելու»:

«Մեզ համար շատ կարեւոր է հենց այս միջոցին ընդլայնել աշխարհաքաղաքական եւ աշխարհատնտեսական հաղորդագրությունները, իսկ Դուբայը իդեալական վայր է դրա համար», նոր աշխատավայրի վերաբերյալ իր ուրախությունն է արտահայտել Լարա Սեդրակյանը: ՀԲԸ միության նախագահ Պերճ Սեդրակյանի դուստր Լարան լրագրողական իր սկզբնական քայլերն է արել Բոստոնում, այնուհետեւ McKinsey եւ Company հաստատության բիզնես վերլուծաբանն է եղել, ավարտել է Հարվարդը, ազատ խոսում է արաբերեն, հայերեն, ֆրանսերեն, իսպաներեն լեզուներով, տարրական գիտելիքներ ունի պարսկերենից եւ պորտուգալերենից:

«Բլումբերգը» լրատվական մի աղբյուր է, որին աշխարհում ամենաշատ ֆինանսական փորձագետներն ու ձեռնարկատերերն են վստահում: 72 երկրներում ավելի քան 2300 լրագրողներ ու մուլտիմեդիայի մասնագետներ ունեցող «Բլումբերգը» իր հեռուստատեսության, ռադիոյի, թվային եւ տպագիր լրատվամիջոցներով համարվում է աշխարհում ամենամեծ լրատվական ընկերություններից մեկը:

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**
**Գերմանիա**

# Արեւմտյան երկակի ստանդարտ տարածաշրջանում ընթացող համաժողովրդական շարժումների նկատմամբ

*Խնդիրը բռնատիրությունը չէ, ոչ էլ ժողովուրդների ազատությունը, այլ ԱՄՆ-ի տարածաշրջանային քաղաքականության շարունակականությունը*

Մարտի 23-ին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար **Բան Կի Մունը** Լիբիայի կառավարությանը մեղադրեց Անվտանգության խորհրդի` ապստամբների դեմ զինված գործողությունները անհապաղ դադարեցնելու պահանջն անտեսելու մեջ: Մարտի 24-ին` Լիբիայի դեմ ձեռնարկվող ռազմական գործողությունների հինգերորդ օրը, կոալիցիոն ուժերը ռմբակոծեցին մայրաքաղաք Տրիպոլին: Այսպիսով, սպանված խաղաղ բնակիչների թիվը առնվազն 100-ի հասավ:

Մինչ Լիբիայի կառավարությունը միջազգային հանրության ուշադրությունը հրավիրում էր բնակչության շրջանում կատարվող սպանությունների վրա, նույն օրը, այսինքն` մարտի 24-ին, կոալիցիոն ուժերի ամերիկացի հրամանատար, ադմիրալ **Ջերարդ Հուբերը** հայտարարեց, որ իրենց թիրախը խաղաղ բնակիչները չեն, այլ ռազմական օբյեկտները: Մինչդեռ կոալիցիոն ուժերն արդեն հասցրել էին հիվանդանոց ռմբակոծել Լիբիայում: Քանի որ հիվանդանոցը նույնպես օբյեկտ է, թեկուզ առողջապահական, ուստի ենթադրվում է, որ նրանք օբյեկտների միջեւ խտրականություն չեն դնում: Մնում է սպասել մանկապարտեզի կամ դպրոցի ռմբակոծությանը, քանի որ այդպիսի ռմբակոծությունների հարուստ փորձ են ձեռք բերել դեռեւս Հարավսլավիայում:

Խնդիրը, սակայն, կոալիցիոն ուժերի հրամանատարը չէ, ոչ էլ նրա խոսքերն են, այլ ՌԴ նախագահի **Դմիտրի Մեդվեդեւի** երեկվա հեռախոսազրույցը ԱՄՆ նախագահի Բարաք Օբամայի հետ, ինչպես նաեւ ՄԱԿ-ում Չինաստանի մշտական ներկայացուցչի ու արտգործնախարարի հայտարարությունները: Թուրքական «Դունյա Բյուլտենի» կայքէջի վկայությամբ, Ռուսաստանի նախագահը հեռախոսով նախազգուշացրել է նախագահ Օբամային Լիբիայում խաղաղ բնակիչների հետզհետե աճող սպանությունների առնչությամբ եւ ընդգծել է. «Խաղաղ բնակիչների սպանության կանխումը հենց ՄԱԿ-ի ԱԽ-ի թիվ 1973 բանաձեւն է նախատեսում»:

Գալով Չինաստանի արտգործնախարար **Յան Ջիեչիին**, ապա նա էլ երեկ ասել է, որ կոալիցիոն ուժերի ձեռնարկած ռազմական գործողությունների բնակչության շրջանում պատճառած սպանությունները խորը մտահոգության տեղիք են տալիս, լիբիական ճգնաժամը երկրի ինքնիշխանության անկախության եւ տարածաշրջանային ամբողջականության պահպանման սկզբունքով պետք է հաղթահարվի խաղաղ եղանակով, երկխոսությամբ, իսկ ՄԱԿ-ում Չինաստանի մշտական ներկայացուցիչ **Լի Բաոդոնգը** դիմելով կողմերին ռազմական գործողություններն անհապաղ դադարեցնելու կոչով, հիշեցրել է, որ անվտանգության խորհրդի բանաձեւը ընդունվել է Լիբիայի ժողովրդին մարդասիրական աջակցություն ցույց տալու, այլ ոչ թե երկրում մարդկային հետագա աղետի համար նախադրյալներ ստեղծելու առաջադրանքով:

Դրա նախորդ օրը` մարտի 24-ին, Ֆրանսիայի արտգործնախարար Ալեն Ժյուպեի հետ հանդիպումից առաջ, Ռոյթերի հարցերին պատասխանելիս կոչ էր արել նաեւ Իսրայելի արտգործնախարար **Ավիգդոր Լիբերմանը,** բայց Լիբիայի վրա հարձակվող երկրներին: Նա պահանջել էր, որ վերջիններս հարվածեն նաեւ Սիրիային ու Իրանին: Ըստ թուրքական կայքէջի, Լիբերմանը նաեւ հայտարարել էր. «Արեւմուտքը Սիրիայի եւ Իրանի վարչակարգերի դեմ պետք է շարժվի այն սկզբունքով, ինչ անում է Լիբիայում: Այս երկու վարչակարգերն իրենց երկրներում ավելի շատ մարդ են սպանել, քան Լիբիայի վարչակարգը: Նրանք Լիբիայի համեմատ շատ ավելի մեծ սպառնալիք են»:

Ինչպես կարձագանքի Արեւմուտքը Լիբերմանի կոչին, չգիտեմ, բայց որ արեւմտյան տերությունները համաժողովրդական խռովությունների թատերաբեմ դարձած արաբական երկրներին երկակի ստանդարտով են մոտենում, ակնհայտ է: Դա իհարկե պայմանավորված է նրանց տարածաշրջանային շահերով, ինչպես նաեւ անկախ արաբական երկրում տեղի ունեցող իշխանափոխությունից տարածաշրջանային քաղաքականության շարունակականությունն ապահովելու առաջադրանքով: Թերեւս այդ պատճառով էլ Եգիպտոսում բանակի վրա հենվող Հոսնի Մուբարաքին հենց բանակայինների միջոցով տապալող Վաշինգտոնը Մուամմար Քադդաֆիին տապալելու համար Լիբիայի դեմ ռազմական գործողություններ է ձեռնարկում, այսինքն` այս երկու երկրներում հանդես է գալիս ժողովրդի կողքին, սակայն Բահրեյնում միանգամայն անտեսում է խռովության համաժողովրդական բնույթը, որ սատար կանգնի թագավորական իշխանություններին:

Ինչո՞ւ, այն պարզ պատճառով, որ Մուբարաքի հրաժարականից հետո Եգիպտոսում բանակի լիակատար վերահսկողությունը չի սպառնում ԱՄՆ-ի տարածաշրջանային քաղաքականությանը: Հակառակ դրան, Բահրեյնում բնակչության 70 %-ը շիաներ են, թագավորական ընտանիքի տապալումն այստեղ կհանգեցնի շիաների իշխանությանը: Այսպիսով, 60 % շիա բնակչություն ունեցող Իրաքից հետո Իրանի ազդեցության տակ կհայտնվի նաեւ Բահրեյնը, իսկ իրանական պետության ռազմավարական դաշնակից Սիրիան հակասում է Իրանին միջազգայնորեն մեկուսացնելու եւ տարածաշրջանային երկրների աջակցությունից զրկելու ԱՄՆ-ի տրամադրություններին: Այլ կերպ` անկախ Իսրայելի արտգործնախարար Լիբերմանի կոչից, Սիրիան արդեն թիրախ էր ԱՄՆ-ի համար: Խնդիրը, սակայն, սոսկ թիրախները չեն, այլ համաժողովրդական խռովությունների աշխարհագրությունն ամերիկյան քաղաքականությանը չծառայող երկրներով սահմանափակելու Վաշինգտոնի նկրտումներն են: Սա նշանակում է, որ անկախ իշխող վարչակարգերի բնույթից, Սաուդյան Արաբիան եւ Պարսից ծոցի Արաբական Էմիրությունները, եթե նույնիսկ համաժողովրդական խռովությունների թատերաբեմ դառնան, միեւնույնն է, իշխանափոխության չեն ենթարկվի:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

ԱՂԵՏ

# Արդեն 30 կիլոմետրով «անվտանգության գոտի» «Ֆուկուշիմա-1»-ի շուրջը

*Ռադիոակտիվ նյութերը հասել են Եվրոպա*



**Ճապոնիայի միջուկային անվտանգության գործակալությունը երեկ «Ֆուկուշիմա-1» ատոմակայանի արտակարգ իրավիճակի լրջության մակարդակը 5-ից 6-ի է բարձրացրել ըստ 7-բալանոց սանդղակի: Չի բացառվում, որ 3-րդ էներգաբլոկի պաշտպանիչ պատյանը վնասված լինի, նշում է Կիոդո գործակալությունը:**

**ԱՄՆ-ը Ճապոնիային նախազգուշացրել է, որ ռեակտորների հովացման նպատակով ծովի ջրի օգտագործումը կարող է վնասել ԱԷԿ-ի սարքավորումներին: Ամերիկացիները որոշել են օգնել ճապոնացիներին: Ամերիկյան ռազմանավերը քաղցրահամ ջրով կբեռնվեն Յոկոսուկայի ռազմակայանում, իսկ այնտեղից ճապոնական նավերը կհասցնեն «Ֆուկուշիմա-1»:**

**Ճառագայթման բարձր մակարդակի պատճառով ընդհատվել են աշխատանքները 1-ին եւ 2-րդ էներգաբլոկներում: 3-րդ էներգաբլոկի մեքենայական սրահում ռադիոակտիվ ջուր է կուտակվել: Հայտնի է, որ 6 ռեակտորներից 4-ում ջրածնի պայթյուններ են եղել ճնշման աճի հետեւանքով: Նաեւ վտանգավոր բարձր ջերմաստիճան է արձանագրվել բանեցված վառելիքի ավազաններում:**

**Երեկ ջրի ճառագայթման բարձր մակարդակ է նկատվել 1-ին եւ 2-րդ էներգաբլոկների շենքերում: Նախօրեին ԱԷԿ-ում 17 բանվոր ճառագայթման բարձր չափաբաժին էր ստացել: Եվս 2 մասնագետ շատ հիվանդանոց էր տարվել մաշկի լուրջ վնասվածքներով:**

**Աղետյալ գոտում գրեթե ամեն օր 5 մագնիտուդը գերազանցող 20-ից ավելի ցնցում է արձանագրվում: Ճապոնական NHK հեռուստաալիքի պաշտոնական վերջին տվյալների համաձայն, աղետի զոհերի թիվը արդեն 10035 է, անհետ կորածների թիվը` 17443:**

**Կառավարությունը երեկ սկսել է բնակչության տարհանումը ԱԷԿ-ի շրջակա գոտուց` 30 կմ շառավղով (մինչեւ այդ մարդիկ տարհանվել էին 20 կմ շառավղով):**

**Կիոդո գործակալությունը հաղորդում է, որ ԱԷԿ-ից արտանետված ռադիոակտիվ նյութերն արդեն հասել են ԱՄՆ-ի եւ Իսլանդիայի տարածքներ: RFI ռադիոկայանի տվյալներով, ռադիոակտիվության հետքեր նկատվել են նաեւ Գերմանիայում:**

# Երկրաշարժ Մյանմայում

**Երեկ առավոտյան Ֆրանսպրեսը հաղորդեց, որ մարտի 24-ի երեկոյան Մյանմայում (Բիրմա) տեղի ունեցած երկրաշարժի հետեւանքով կա 60 զոհ: 90 վիրավորների տարել են հիվանդանոց:**

**Աղետյալ լեռնային շրջանների մի մասը դժվարամատչելի է, ուստի փրկարարները չեն կարողանում արագ գործել: Ենթադրվում է, որ զոհերի թիվը կարող է ավելի մեծ լինել: Բիրմայի իշխանությունները հաղորդում են հարյուրավոր փլուզված շենքերի մասին:**

**Ամերիկացի սեյսմագետների գնահատմամբ, տեղի է ունեցել 6,8 մագնիտուդով ցնցում: Հողի տատանումները զգացվել են էպիկենտրոնից 800 կմ հեռու գտնվող Բանգկոկում (Թաիլանդ), ինչպես նաեւ Հանոյում (Վիետնամ) եւ ՉԺՀ հարավային շրջաններում:**

# ԵՄ-ը կշրջափակի Քադդաֆիի նավթային եկամուտները

*ՆԱՏՕ-ն կստանձնի հրամանատարությունը*



**Եվրոմիությունը պատրաստ է շրջափակել լիբիական նավթից ու գազից ստացվող բոլոր եկամուտները, որպեսզի Մուամմար Քադդաֆիի վարչակարգը չօգտվի դրանցից: Բրյուսելում երեկ գիշեր նման որոշում է ընդունվել ԵՄ 27 երկրների ղեկավարների գագաթաժողովում:**

**Որոշման մեջ նշվում է, որ «ՄԱԿ-ի ԱԽ բանաձեւին համապատասխան ձեռնարկվող գործողությունները զգալի ավանդ են ներդրել Լիբիայի քաղաքացիական բնակչության պաշտպանության գործում»:**

**«Եվրոպայի խորհուրդը մեկ անգամ եւս գնդապետ Քադդաֆիին կոչ է անում անհապաղ հրաժարվել իշխանությունից, որպեսզի Լիբիան հնարավորություն ստանա արագորեն եւ լիբիացիների ղեկավարությամբ բռնելու ժողովրդավարացման ուղին` լայն երկխոսության հիման վրա եւ հաշվի առնելով երկրի ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության ապահովման անհրաժեշտությունը», ասվում է որոշման մեջ:**

**ԵՄ-ը պատրաստ է օժանդակել այդ երկխոսության կազմակերպմանը (այդ թվում` Ազգային անցումային խորհրդի հետ) եւ Լիբիային օգնել տնտեսության եւ իշխանության նոր կառույցների զարգացման գործում:**

**Որոշման մեջ արտահայտվում է գոհունակություն Եգիպտոսում սահմանադրական ուղղումների ընդունման առթիվ եւ մտահոգություն Սիրիայի, Եմենի եւ Բահրեյնի դեպքերի կապակցությամբ: ԵՄ ղեկավարները դատապարտել են ուժի գործադրումը խաղաղ ցուցարարների դեմ:**

**ԵՄ պետությունների ու կառավարությունների ղեկավարները նշել են Հարավային Միջերկրածովքում գործընկերային նոր հարաբերությունների ձեւավորման անհրաժեշտությունը: Մասնավորապես տարածաշրջանում 1 մլրդ եվրոյով կավելացվի Եվրոպական ներդրումային բանկի վարկավորման ծավալը: Ռոյթեր գործակալությունը հաղորդում է, որ երեկ գիշեր կոալիցիոն ուժերի ռազմօդանավերը վերսկսել են Լիբիայի մայրաքաղաք Տրիպոլիի եւ արվարձանների ռմբակոծումները: Թիրախներ են դարձել վարչական շենքերը եւ զինվորականների դիրքերը: Նախօրեին ռմբակոծվել էր ծովափից 250 կմ հեռու գտնվող ռազմակայանը, Սեբաս քաղաքում գնդակոծվել էին Քադդաֆիին ենթակա օբյեկտներ:**

**Դիվանագիտական աղբյուրները Բրյուսելից հաղորդում են, որ եկող շաբաթվանից ՆԱՏՕ-ն ստանձնելու է Լիբիայի ռազմական գործողությունների հրամանատարությունը: Գործողություններին մասնակցելու են ՆԱՏՕ-ի անդամ բոլոր 28 երկրները: Հրամանատարությունը ՆԱՏՕ-ին հանձնելուց հետո ԱՄՆ-ը չի հեռանա Լիբիայից, բայց զգալիորեն կնվազեցնի իր զինծառայողների թիվը:**

# Բաշար Ասադը խոստանում է բարեփոխումներ



**Սիրիայի նախագահ Բաշար Ասադի խորհրդական Բուսայնա Շաաբանը հայտարարել է, որ կառավարությունը մշակել է աննախադեպ բարեփոխումների ծրագիր, որոնք պետք է մեծ ազատություն տան ժողովրդին: Նախագահ Ասադը խոստանում է վերացնել Սիրիայում 48 տարի գործող արտակարգ դրության ռեժիմը, իրականացնել տնտեսական ու քաղաքական կարեւոր բարեփոխումներ:**

**Ասադի խորհրդականն իր հեռուստաելույթում հայտնել է, որ պատրաստվում են օրինագծեր քաղաքական շարժառիթներով հետապնդումն արգելելու, քաղաքական կուսակցությունների ու շարժումների գործունեության սահմանափակումները վերացնելու վերաբերյալ: Նաեւ անցկացվելու են տնտեսական բարեփոխումներ, որոնք կոչված են զարգացնելու երկրի տնտեսությունը, ստեղծելու նոր աշխատատեղեր, դյուրացնելու փոքր ու միջին բիզնեսը:**

**Շաաբանի խոսքերով, նախագահ Ասադը իրավապահներին չէր հրամայել կրակել վերջին օրերին կայացած հակակառավարական ցույցերի մասնակիցների վրա: Խորհրդականն ավելացրել է, որ մեղավորները կհայտնաբերվեն եւ արժանի պատիժ կկրեն:**

**Ընդդիմության ներկայացուցիչները ավելի վաղ հայտարարել էին, որ Դարաա քաղաքում ոստիկանների եւ ցուցարարների բախումների ժամանակ 100 մարդ է սպանվել: Դիագնոզություն կատարած բժիշկը ԶԼՄ-ներին ասել էր, որ բոլոր զոհերը սպանվել են հրազենից եւ որ սպանվածներից մեկն էլ բժիշկ է, որը փորձել էր օգնել վիրավորներին:**

**Ժողովրդական հուզումների մասնակիցները իշխանություններից պահանջում են երաշխավորել քաղաքացիական ազատություններ, վերջ դնել կաշառակերությանը, խզել հարաբերությունները Իրանի եւ «Հզբոլլահ» շարժման հետ:**

## Մշակույթ

Այս դեմքը երբեք չէր ցանկանա առնչված լիներ Նարեկացի արվեստի միության հետ, քանի որ մշակութային այս օջախը 7-ամյա գործունեությամբ միշտ բաց է եղել հանրության առաջ՝ մշակութային առողջ քարոզչությամբ, արվեստի տարբեր տեսակներ ներկայացնելով, մտավորականների հետ հանդիպումներով, զանազան մշակութային միջոցառումներով, մի շարք արժեքավոր հրատարակություններով, երաժշտական CD-ների թողարկումներով եւ բազմաթիվ հաճելի ու լուսավոր պահեր պարգեւել իր հյուրերին:

# Չկանխատեսված «սցենար»
# Մտահոգություններ մի ֆիլմի քննարկման առիթով

Ցավոք, տեղի ունեցավ երեկվա պատահարը, եւ դա իրականություն է, ինչը պետք է գուցե հուշի միության ղեկավարին՝ այդուամենայնիվ, ավելի ուշադիր լինել սրահը տրամադրելու հարցում, մանավանդ որ ծառայություններն անվճար են եւ մուտքը՝ ազատ: Ի վերջո, մարդիկ ժամանակ են դրան տրամադրելու եւ ասելիք, դիտելիք պիտի լինի, մեր պարագայում նաեւ՝ գրելիք: Այս անգամ գրելիքը անսպասելի բովանդակություն պիտի ունենա: Գլխավորը ոչ թե ցուցադրվող ֆիլմերն էին, թեեւ հանդիպման առիթն էր դա, այլեւ ընդհանուր մթնոլորտը, երեւույթը՝ քննարկման աննախադեպ շարունակությունը:

Նարեկացի արվեստի միության մամլո հաղորդագրությունը ձեւակերպված էր այսկերպ՝ «Հայ ռեժիսորի խնդրահարույց ֆիլմի հատուկ ցուցադրություն-քննարկում»: Ներկայացվում էր Դավիթ Ստեփանյանի՝ «Հայկ» փաստավավերագրական կինոստուդիայի պատվերով նկարահանած եւ տարաձայնությունների պատճառով, իրենց բնորոշմամբ, սուր գրաքննադատության եւ կրճատումների ենթարկված «Հասցեն՝ Հայաստան» ֆիլմը:

Ներկայացվեցին ֆիլմի թե՛ հեղինակային (նախնական), թե՛ կրճատված՝ «Թիմը», տարբերակները: Ֆիլմը նվիրված էր 2006-ին Թուրինում եւ 2008-ին Դրեզդենում անցկացված շախմատի միջազգային օլիմպիական խաղերում Հայաստանի շախմատի տղամարդկանց հավաքականի անընդմեջ 2 հաղթանակներին՝ չեմպիոնական տիտղոսներին:

Ռեժիսորի «Թեղուտ»՝ 10 րոպեանոց ֆիլմը իր նախաձեռնությամբ նկարահանված, վերջում ցուցադրվեց. սա ընդհանուր հայացք է Թեղուտի՝ վերջին տարիների մեծ հնչեղություն ստացած բնապահպանական կարեւորագույն խնդրին: Հեղինակի անհանգստությունը, մտահոգությունները արտահայտված են մի քանի կադրերի միջոցով՝ բնության նախնական, անխաթար վիճակ՝ սերմնացաններով, լավաշ թխող կանանցով, հետո հանքարդյունաբերության հռնդյուններ, վեր բարձրացող ծխի սեւ քուլաներ, կտրատված հսկայական անտառներ ու բնապահպանների բողոքի ճիչը՝ ոստիկանական բռի ուժի միջամտությամբ ու կանանց աղաղակները:

Որեւէ վերաբերմունք, կարծիք, թեկուզ լրագրողական դիտարկում առաջին ֆիլմի վերաբերյալ անելն իմ կողմից ոչ ճիշտ, նաեւ պատշաճ չէ՝ աշխատանքային հանգամանքներով պայմանավորված ֆիլմը թերի դիտելու պատճառով: Այդուամենայնիվ 2 տարբերակների 25-30 րոպեանոց դիտումի տպավորությամբ, մեր ազգային հավաքականի հաղթանակները գոնե ոգեւորության որեւէ զգացում արթնացնեի՞ն: Գուցե սա չէր մտնում նրանց ծրագրերի մեջ: Իսկ հաստատապես բացակայում էին գեղարվեստական-ստեղծագործական տարրը եւ գեղագիտական հայացքը:

Եւ սակայն հետագա իրադարձություններն են, որ մեզ մտորելու են մղում, փոքր-ինչ ծավալվելու հայկական տիրող իրականության շուրջը:

Հայաստանյան մշակույթի եւ առհասարակ բոլոր ոլորտներում, բացառությամբ առանձին անհատների եւ սահմանափակ առողջ միավորների, գործող չափանիշները վաղուց բարոյական նորմերից դուրս են: Ապացույցը, վկայությունը մեր այսօրվա կյանքն է, իրականությունը, հայկական շաղված, պղտորված-անառողջ մթնոլորտը: Սրա հիմնական կրողներից մեկը հայկական հեռուստատեսությունն է՝ վաղուց արդեն իր վտահամբավ հաղորդումներով հանրության գիտակից շերտից արդարացիորեն արհամարհված (հումորային եւ գովազդային անհեթեթություններ, անմիս շուներ, կենցաղային ձայներ- տափակ սերիալներ): Սրանք մտայնություն ձեւավորող լուրջ գործոններ են՝ գրագիտություն ու սեփական արմատները մոռացած լայն զանգվածների վրա բավական ներազդող միջոցներ, որոնց հանրային հեռարձակումները ազատ են արձակում ամեն ապաշնորհության եւ անգրագիտության ձեռքեր: (Հանրակրթական ու մասնագիտական կրթարանները կարծես միանգամայն այլ գործերով (բիզնեսով) են զբաղված, փոխել են իրենց բնույթը): Նկատել տանք նաեւ ընդունված չափանիշների այլեւս սովորական դարձած իրողությունը. եթե գրական կամ երաժշտական շուկան ողողված է ամեն տեսակ աղբով, որոնց տերերն իրենց ապրանքը վաճառում են արվեստի նշանի տակ, ինչու նույնը չպիտի լինի մյուս ասպարեզներում:

Անդրադառնալով քննարկմանը՝ մեխը, կարելի է ասել, պատվիրող կողմի գրաքննության մերժումն էր:

2004-ից 2009-ը «Հայկ» կինոստուդիայի ռեժիսոր, մի շարք ֆիլմերի հեղինակ Դավիթ Ստեփանյանն այժմ ներկայանում է որպես անկախ ռեժիսոր եւ ինչպես «Թեղուտը», հաջորդ ֆիլմն էլ սեփական նախաձեռնությամբ եւ միջոցներով է հեղինակելու, որովհետեւ պատվիրատուն իր պահանջներն է դնում, իսկ ինքը համակերպվող-լռողներից չի:

Քննարկումն, իհարկե, առաջին ֆիլմի շուրջն էր հիմնականում, եւ սցենարիստը երբեք չէր կարող երեւակայել իր ֆիլմի նման «շարունակություն»՝ արդեն իրականության մեջ, այս անգամ իր դերակատարությամբ նաեւ: Այնպիսի տպավորություն էր, թե քննարկման սցենարը նախապես պլանավորված էր. մի քանի դրական կարծիքներ, հետո՝ գուցեեւ՝ բացասական էլ հնչի: Բայց անսպասելին պատահեց, երբ առաջին երկու դրական կարծիքներից հետո հնչեց հանդիսատեսներից մեկի պարզ հարցադրումը՝ գրագետ, կիրթ, նախ վերաբերմունք եւ կարծիք, ապա՝ հարց, թե ինչո՞ւ «Հայկ» կինոստուդիայի պատվերով նկարահանած ֆիլմը, որի վրա դրամ է ծախսվել, չի ընդունվել, չի ցուցադրվել, թողարկվել է երկրորդ տարբերակը, ինչո՞ւ պետականորեն ֆինանսավորված ֆիլմը լայն լսարանին չի ներկայացվում, այլ այստեղ՝ 40-50 հանդիսականի միայն: Եվ ո՞րն է ֆիլմի կոնցեպցիան, ասելիքը: Հարցը հակազդվեց սցենարիստի տարօրինակ պահվածքով՝ աստիճանաբար ագրեսիվացող ու խոսակցությունը շիկացնող, որին հետեւեցին փողոցային ժարգոնի ծանոթ հնչերանգային արտահայտություններ: Ցավալիորեն, «արա ապեր, արի դուս, կիմանաս ես ով եմ»-ի «գայթակղությանը» հարցադրող կողմը չդիմացավ ու դուրս եկավ: Քիչ անց դիմացի այգու մթությունը խտացավ տղամարդկանց խմբերի սիլուետներով. հայհոյանքների տարափ, քաշքշոց, որին շատ արագ հետեւեց քաղաքային ոստիկանության արձագանքը, եւ շարունակությունը տեղափոխվեց Կենտրոնի ոստիկանություն:

Քննարկման երիտասարդ կազմակերպիչն ու վարողը, անտեղյակ վերջին զարգացումներից, շարունակեց իր գործը, ավարտին խոստանալով չկազմակերպել այլեւս նման քննարկում, քանի որ երկխոսության մենք պատրաստ չենք: Սա, իհարկե, ճշմարիտ է եւ ամենատարբեր մակարդակներում ակնհայտ:

***

Ո՞ւր են մեզ տանելու մեր փուչ ինքնավստահությունը, մասնագիտական արհամարհանքը, չափանիշերի այս խեղաթյուրումները, եւ ինչպիսի՞ հավակնոտություն միջակության գորշ զանգվածի տարածքում: Ինչպիսի՞ խեղճություն ու հակազդեցության խուլ թշնամանք:

Մեր հասարակությունը օդի պես կարիք ունի համատարած դաստիարակության՝ տարրական էթիկայից սկսած, վարվելաձեւի, պահվածքի, խոսելաձեւի, վարքագծի, նիստ ու կացի, նրա թմրող գիտակցության մեջ պարբերաբար ներարկել է պետք մարդկային՝ այսօր ամենաանտեսված զգացումը՝ հարգանքը նախ իր (սեփական արժանապատվություն), ապա դիմացինի, միջավայրի նկատմամբ, կարգավորել նրա միտքն ու հոգու քաոսը, մոտեցնել մարդկային իսկական արժեքներին:

Ինչ անեծք է տգիտությունը կարգել թագավոր, ազատությունը վերածել անբարոյականության: «Թեղուտ»-ում ռեժիսորի օգտագործած կադրերից մեկում հայտնի բնապահպան Կարինե Դանիելյանի խոսքը՝ մենք կփրկվենք, երբ վերագտնենք մեր բարոյականությունը, փորձենք, թեեւ շա՞տ է դժվար, բայց կյանքի կոչել, թեկուզ՝ աստիճանաբար:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

***Հ. Գ. - Մի քանի պարզաբանումների համար քննարկումն անցկացնող երիտասարդ կինոգետի հետ հաջորդ օրվա հեռախոսազրույցում հայտնաբերեցի հայկական տիրող իրականությանն իմ՝ իսկապես օտար եւ անհաղորդ լինելս ու կյանքի բերումով լրագրողական աշխատանքիս՝ իր ասելով (նման երեւույթների) փորձի պակասը, երբ նկատել տվի, որ համենայն դեպս երեկվա միջադեպը մտավորական, մշակութային միջավայրերին բնորոշ չէ, գոնե ինձ անծանոթ եւ արվեստ ներկայացնող մարդկանց պատիվ չբերող: Հասկացա նաեւ, որ նման երեւույթները, չնայած ցավալի, բայց քանի որ տարածված են, ուստի սովորական են այլեւս: (Գուցե երիտասարդ արվեստագետների մոտ այդպիսի բարքե՞ր են ընդունված): Զարմանալին սակայն, երեւույթների (բնավ ֆիլմագիտություն անելու կամ թեկուզ կարծիք հայտնելու մասին չէ խոսքը) ընկալման տարակարծություն չհանդուրժելու խոսակցիս մոտեցումն էր. մի քանի խոսքերից հետո, նրա՝ դեռ չգրված հոդվածի՝ դեղին մամուլի հրատարակում որակելու կանխակալ կարծիքը:***

# Հրաժարուենք ճոռոմաբանութիւնից, քարոզչութիւնից եւ ուղեղալուացքից

Այս կամ այն զգացումներով կամ գաղափարներով մարդկանց տոգորելու, աւելի ճիշտ՝ մարդկանց դիրքորոշելու հնարաւորութիւն տալու համար լավագոյն եղանակը նրանց համապատասխան անկողմնակալ, համակողմանի եւ ճիշտ տեղեկութիւններ ու գիտելիքներ փոխանցելն է, որից յետոյ մարդիկ ինքնուրոյնաբար կարող են դիրք ճշտել կեանքի բազմազան բնագաւառների ու երեւոյթների նկատմամբ:

Մարդկանց այս կամ այն միտքը կամ գաղափարը պարտադրելու եւ կամ որեւէ զգացումով տոգորելու նպատակով «մեղմ» կամ կոպիտ եղանակների կիրառումը մարդկանց արժանապատուութեան դէմ խաղալ է նշանակում եւ վիրաւորում է նրանց ինքնասիրութիւնը:

Խնդիր չէ, թէ մենք ինչքան ճիշտ ու անսխալ ենք համարում մեր գաղափարները եւ մտքերն ու համոզումները: Դա մեր իրաւունքն է, սակայն երբ փորձում ենք պարտադրել, բռնադատում ենք մարդկանց ինքնուրոյնաբար մտածելու իրաւունքը:

Մարդկանց ու ժողովուրդների ազատօրէն ու ինքնուրոյնաբար մտածելու իրաւունքը բռնադատւում է նամանաւանդ բռնատիրական երկրներում:

Ազատօրէն ու ինքնուրոյնաբար մտածելու ունակութիւնը բնութեան կամ Աստծոյ կողմից մարդուն շնորհուած ամենամեծ բարիքներից է, եւ մարդկանց ու ժողովուրդների զարգացումն ու յառաջադիմութիւնը պայմանաւորված են մարդկային այս ունակութեամբ ու կարողութեամբ՝ մարդկային բնական այս իրաւունքով:

Այն երկրներն են իսկապէս զարգանում ու յառաջադիմում, ուր չի բռնադատւում այդ բնական իրաւունքը, եւ տեղքայլ ու նոյնիսկ յետընթաց են արձանագրում այն բռնատիրական երկրներում, ուր կաշկանդւում է ազատօրէն ու ինքնուրոյնաբար մտածելու ունակութիւնը: Այդ այդպէս է, ինչքան էլ երեւութապէս ուժեղ ու զօրաւոր թուան բռնատիրական երկրները:

Ընդհանրապէս ստեղծագործական միտքը ծաղկում է այնտեղ, ուր ազատօրէն ու ինքնույրոյնաբար մտածելու միջավայր գոյութիւն ունի:

Մեր երկրում՝ Հայաստանում, այսօր մարդիկ հնարաւորութիւն ունեն ազատօրէն ու ինքնուրոյնաբար մտածելու եւ իրենց մտքերն ու մտածումները այլոց հետ կիսելու, այդուհանդերձ տակաւին գոյութիւն ունեն խորհրդային կարգերից մնացած միտք ու գաղափար պարտադրելու յոռի բարքեր ու



սովորութիւններ, որոնք կաշկանդում են ազատ միտքն ու մտածողութիւնը:

Մեր երկրում, տարբեր առիթներով, մօր, հայրենիքի, հայրենասիրութեան, մայրենիի եւ տարաբնոյթ այլ հարցերի մասին լսում ենք ճոռոմ ու ամպագոռգոռ ճառեր, որոնց ընթացքում ճառ արտասանողները կամ կարդացողները ձայնային անբնական ու արհեստական ելեւէջներով ու կեղծ յուզականութեամբ փորձում են իրենց ասածը համոզիչ դարձնել: Այդ մարդիկ թերեւս բարեացակամօրէն են առաջ քաշում իրենց հարցերը, սակայն մոռանում են, որ ամպագոռգոռ ճոռոմաբանութիւնը զգայնութիւն է առաջացնում մարդկանց մէջ եւ ճիշտ հակառակ ազդեցութիւն է թողնում նրանց վրայ:

Ճոռոմաբանութեան այս արատը, բոլորովին տարբեր պատճառներով, նկատելի է նաեւ Սփիւռքում եւ շատ աւելի նկատելի էր մեր երկրում, ուր օրնիբուն կոմունիզմ էին գովերգում ու կառուցում, ուր ամէն օր ճոռոմաբանում էին ազգերի ու խորհրդային հանրապետութեանց իրաւահաւասարութեան ու պլանների գերակատարման մասին, եւ մենք տեսանք պլանների գերակատարման ու ամպագոռգոռ ճոռոմբանութեան ու ամբոխավարութեան արդիւնքը: Նման ճոռոմաբանութիւնները այսօր կոչւում են քարոզչութիւն՝ պրոպագանդա, իսկ քարոզչութիւնը, անկախ այն բանից, թէ բառարաններում ինչպէս է բացատրւում, այսօր զարգացած երկրներում դիտւում է իբրեւ ուղեղալուացք, եւ բռնատիրական կարգերում ընդունուած ուղեղալուացքը մարդկանց ու ժողովուրդներին յուսախաբ է անում՝ յաչս նրանց արժեզրկում է մարդկային ու ազգային արժէքները եւ ի վերջոյ պոռթկման ու ըմբոստութեան է մղում ժողովուրդներին, ինչն այս վերջերս տեսանք Աֆրիկայի ու Միջին Արեւելքի մի շարք երկրներում:

Փորձենք խուսափել ճոռոմաբանութեան արատից եւ փորձենք այլեւս չգործածել ուղեղալուացք նշանակող «քարոզչութիւն» ու «քարոզել» բառերը:

ԱՅՎԱԶ ԳՐԻԳՈՐԵԱՆ

# Վարդան Մինասյան. «Ամենամեծ պարգեւը 3 միավորը կլինի»

Հայաստան-Ռուսաստան ֆուտբոլային ընտրական մրցախաղի նախօրեին ՀՀ հավաքականի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանը հանդիպեց հայ եւ ռուս լրագրողների հետ: Նա տեղեկացրեց, որ առաջիկա հանդիպմանը հավաքականը սկսել է նախապատրաստվել մարտի 22-ից: Վնասվածքի պատճառով հավաքին չի մասնակցել Արտաշ Առաքելյանը: Մնացած 21 ֆուտբոլիստների ֆունկցիոնալ վիճակը մրցաշրջանի այս հատվածի համար գլխավոր մարզիչը լավ է համարում: Նա արդեն կողմնորոշվել է մեկնարկային կազմի 10 ֆուտբոլիստների հարցում: Ինչ վերաբերում է Արտաշ Առաքելյանի բացակայությանը, ապա կան համարժեք փոխարինողներ՝ հանձինս կենտրոնական պաշտպաններ Արթուր Յուզբաշյանի եւ Վալերի Ալեքսանյանի:



Վարդան Մինասյանի համոզմամբ մեր հավաքականի ֆուտբոլիստները ֆունկցիոնալ եւ հոգեբանական առումով պատրաստ են հանդիպմանը: Նա շատ է ցանկանում, որ հավաքականը լավ խաղ ցուցադրի, կարողանա դրսեւորել իր լավագույն որակները: Այդ դեպքում կարելի է դրական արդյունք ակնկալել: Թեեւ ժամանակակից ֆուտբոլում սեփական դաշտի գործոնն այնքան էլ էական չէ, սակայն գլխավոր մարզչի կարծիքով հայ երկրպագուների բուռն աջակցությունն իր դրական ազդեցությունը կունենա: Իսկ իր եւ թիմի ֆուտբոլիստների համար ամենամեծ պարգեւը կլինի 3 միավորը:

Գլխավոր մարզիչը տեղեկացրեց, որ կամերունցի դարպասապահ Ապուլա Բետեին հավաքական վերադարձնելու բանակցությունները ընթացքի մեջ են: Ինչ վերաբերում է Արազ Օզբիլիսին, ապա ակումբում նրան նոր պայմանագիր են առաջարկել, ու ֆուտբոլիստը որոշ խնդիրներ ունի: Նա կրկին հաստատել է, որ միայն մրցաշրջանի ավարտից հետո կկատարի իր ընտրությունը, քանի որ հույս ունի ընդգրկվելու Հոլանդիայի հավաքականում:

Վարդան Մինասյանն առանձնակի նշանակություն չի տալիս այն փաստին, որ ՌԴ հավաքականը Բելգիայի ու Իրանի ընտրանիների հետ խաղերում լավ չի խաղացել եւ պարտվել է: Քանի որ դրանք ընկերական հանդիպումներ էին: Իսկ պաշտոնական մրցախաղերում մրցակցությունը թեժ է լինում, ֆուտբոլիստների տրամադրվածությունն էլ այլ մակարդակի վրա է: Մինասյանի կարծիքով ֆունկցիոնալ ոչ լիարժեք պատրաստվածությունը ֆուտբոլիստները պետք է փոխհատուցեն առաջիկա խաղում մարտական բնավորության, կամային հատկանիշների դրսեւորմամբ, քանի որ հաղթանակի արժեքը շատ բարձր է:

# Դիկ Ադվոկատ. «Երջանիկ կլինեմ, եթե հաղթենք հայերին»

Երեկ կեսօրին ժամանելով Երեւան, Ռուսաստանի հավաքականը 17.30-ին «Հանրապետական» մարզադաշտում իր առաջին պարապմունքն անցկացրեց: Իսկ մինչեւ մարզումը, ՌԴ հավաքականի գլխավոր մարզիչ Դիկ Ադվոկատը հանդիպեց լրագրողների հետ: Նրա կարծիքով, այսօրվա խաղում բաց ֆուտբոլի ականատես կլինենք, քանի որ երկու հավաքականներն էլ հարձակողական ոճով են խաղում: Ըստ Ադվոկատի, ՀՀ հավաքականը շատ վստահ է խաղում, մարտական ոճ ունի ու երբեմն խորամանկ ֆուտբոլ է ցուցադրում: Ադվոկատի կարծիքով, մեր ֆուտբոլիստները սեփական հարկի տակ նույն ոճով կգործեն:



Ադվոկատը համոզված է, որ ի տարբերություն Իրանի հետ ընկերական հանդիպման, ՌԴ հավաքականն այս խաղին լրիվ այլ տեսքով կներկայանա ու այլ մակարդակի ֆուտբոլ կցուցադրի: Իսկ Հայաստանի հավաքականին հաղթելու համար խաղադաշտ դուրս եկող ֆուտբոլիստները պետք է 100 տոկոսից էլ ավելի նվիրված խաղան, մեծ ջանքեր ներդնեն: Նրա կարծիքով, ներկայումս Եվրոպայում թույլ հավաքականներ չկան: Ժամանակին, երբ Հոլանդիայի հավաքականը 2-1 հաշվով հաղթել էր Բելառուսի ընտրանուն, շատերը դժգոհ էին մնացել: Իսկ եթե այժմ ռուսները նույնպիսի հաշվով հաղթեն հայերին, Ադվոկատն անչափ ուրախ ու գոհ կլինի:

# Կկայանա՞ ռեւանշը 12 տարի անց

*1-ին էջից*

**Հետաքրքրական է, որ առաջին հանդիպումը կայացել է ուղիղ 12 տարի առաջ՝ 1999-ի մարտի 27-ին «Հրազդան» մարզադաշտում: Որքան էլ որ տարօրինակ է, ռուսները Երեւան էին ժամանել որպես ընտրական խմբի հետնապահներից մեկը, որոնք Անատոլի Բիշովեցի գլխավորությամբ պարտվել էին նախորդ տարվա աշնանն անցկացրած բոլոր 3 խաղերն էլ: Իսկ ահա Հայաստանի հավաքականը Սուրեն Բարսեղյանի գլխավորությամբ 3 խաղում 4 միավոր էր վաստակել: Մեր ֆուտբոլիստները մեկնարկային խաղում «Հրազդանում» 3-1 հաշվով հաղթել էին Անդորրայի հավաքականին, ապա գոլազուրկ ոչ-ոքի էին ավարտել խաղը իսլանդացիների հետ: 3-րդ տուրում հյուրընկալվելով Ուկրաինայի հավաքականին, մեր ընտրանին զիջել էր 0-2 հաշվով:**

**Թվում էր, թե ռուսների հետ խաղում հաջողությունը կուղեկցի դաշտի տերերին: Սակայն ՌԴ հավաքականի ղեկը ստանձնած Օլեգ Ռոմանցեւն անհրաժեշտ շտկումներ էր կատարել, ու ռուսները Երեւանում 3-0 հաշվով խոշոր հաղթանակ տոնեցին: Արդեն 7-րդ րոպեին Վալերի Կարպինը, որ ներկայումս գլխավորում է Մոսկվայի «Սպարտակը», բացեց հաշիվը: Մեր ֆուտբոլիստներն աստիճանաբար հավասարեցրին խաղը ու կարող էին վերականգնել հավասարակշռությունը, սակայն գոլային պահերը չիրացրին Արթուր Ոսկանյանը, Կարապետ Միքայելյանը, Արթուր Պետրոսյանն ու Ալբերտ Սարգսյանը: Իսկ ահա ընդմիջումից հետո Վալերի Կարպինը 11 մ-ից եւ Վլադիմիր Բեսչաստնիխը եւս 2 անգամ գրավեցին Ռոման Բերեզովսկու պաշտպանած դարպասը:**

**Մրցակիցների պատասխան հանդիպումը կայացավ սեպտեմբերի 4-ին Մոսկվայի «Լուժնիկի» մարզադաշտում: Մինչ այդ խաղը կայացած ընտրական 3 հանդիպումներում էլ ռուսները հաղթել էին, իսկ ահա Հայաստանի հավաքականը միեւնույն 0-2 հաշվով պարտվել էր Ֆրանսիայի եւ Իսլանդիայի հավաքականներին, գոլազուրկ ոչ-ոքի էր խաղացել ուկրաինացիների հետ: Ընդ որում ընտրական վերջին 6 հանդիպումներում մեր հավաքականը գոլ չէր խփել:**

**Գոլային երաշտը շարունակվեց նաեւ մոսկովյան խաղում: Այս անգամ էլ արդեն 8-րդ րոպեին մերոնք գոլ բաց թողեցին: Բեսչաստնիխը հստակ իրացրեց 11 մ-ը, ապա 71-րդ րոպեին Կարպինը կրկնապատկեց հաշիվը:**

**12 տարի է անցել այդ հանդիպումներից, շատ բան է փոխվել երկու հավաքականներում: Այսօր ՀՀ հավաքականը մեծ ներուժ ունի եւ լավ հնարավորություն է ստացել ուղեգիր նվաճելու: Հետաքրքրական է, որ 1999-ին կայացած հանդիպումների մասնակիցներից այսօրվա խաղին նախապատրաստվում են միայն երկուսը՝ Ռոման Բերեզովսկին ու Սարգիս Հովսեփյանը: Կարծում ենք, որ նրանք իրենց խաղընկերների հետ կձգտեն ռեւանշի:**

# Վետերանները բաժանվեցին խաղաղությամբ

Երեկ «Միկա» մարզադաշտում կայացավ Հայաստանի եւ Ռուսաստանի վետերան ֆուտբոլիստների հանդիպումը: Ինչպես հաճախ է պատահում նման հանդիպումներում, խաղն ավարտվեց ոչ-ոքի՝ 4-4: Մեր հավաքականից գոլերի հեղինակներ դարձան Էդուարդ Մարգարովը, Նազար Պետրոսյանն ու նրանց ավելի երիտասարդ խաղընկերներ Արմեն Շահգելդյանն ու Վարազդատ Ավետիսյանը: Հյուրերից աչքի ընկան Միխայիլ Գերշկովիչը, Յուրի Կովտունը, Վալերի Խաչանյանն ու Էռնեստ Մարկարովը:

Թիմերը հանդես եկան հետեւյալ կազմերով.

Հայաստան-Վաղինակ Շահնազարյան, Կարեն Դոխոյան, Արմեն Պետիկյան, Երվանդ Կրբաշյան, Նորայր Մեսրոպյան, Ռաֆայել Գալուստյան, Սերգեյ Բոնդարենկո, Հովհաննես Զանազանյան, Էդուարդ Մարգարով, Նազար Պետրոսյան, Արմեն Շահգելդյան:

Փոխարինման դուրս եկան Հայկ Կիրակոսյանը, Արամ Փարսադանյանը, Ալբերտ Սարգսյանը, Սեւադա Արզումանյանը, Վարազդատ Ավետիսյանն ու Էդիկ Հարությունյանը:

Ռուսաստան-Կարեն Սաֆարով, Յուրի Կովտուն, Ախրիկ Ցվեյբա, Վագիզ Խիդիատուլին, Սերգեյ Օլշանսկի, Դմիտրի Կուզնեցով, Վալերի Խաչանյան, Նիկոլայ Խուդիեւ, Յուրի Գավրիլով, Միխայիլ Գերշկովիչ, Պավել Ռասոդով:

Փոխարինման դուրս եկան Ալեքսանդր Տուկմանովը, Էռնեստ Մարկարովը, Դմիտրի Անանկոն, Անդրանիկ Մարգարյանը, Ալեքսեյ Պրուդնիկովն ու Կարեն Բաղդասարովը:

ԳՆԱՀԱՏԱՆՔ

# Նիկիտա Սիմոնյանը պարգեւատրվեց «Պատվո» շքանշանով



**ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով հայ-ռուսական բարեկամության ամրապնդմանն ուղղված գործունեության, հայկական ֆուտբոլի զարգացման գործում ներդրած նշանակալի ավանդի եւ ունեցած ծանրակշիռ ձեռքբերումների, ֆուտբոլի ասպարեզում երկարամյա, արդյունավետ աշխատանքի համար Նիկիտա Պավելի Սիմոնյանը պարգեւատրվել է «Պատվո» շքանշանով: Երեկ ընդունելով Նիկիտա Սիմոնյանին, Սերժ Սարգսյանը պարգեւը հանձնել է օլիմպիական չեմպիոն ու ԽՍՀՄ բազմակի չեմպիոն, ԽՍՀՄ վաստակավոր մարզիչ, նախկինում լեգենդար ֆուտբոլիստին:**

**«Շատ ուրախ ենք, որ Դուք ողջ եւ առողջ եք, աշխատում եք ի նպաստ ֆուտբոլի զարգացման: Մենք միշտ հպարտանում ենք Սփյուռքի մեր հայրենակիցներով ու առաջին հերթին այն մարդկանցով, ովքեր իրենց բնագավառներում հասել են ամենաբարձր մակարդակի: Դուք մեր ազգն ավելի ճանաչելի եք դարձնում: Շնորհակալություն Ձեզ:**

**Իմ հիշողություններում հայ ժողովրդի ցնծության երեք դեպք է դաջվել: Առաջինը, երբ Տիգրան Պետրոսյանը դարձավ աշխարհի չեմպիոն: Երկրորդը, երբ 1973-ին «Արարատը» դարձավ երկրի չեմպիոն եւ նվաճեց գավաթը: Եվ երրորդը, երբ մայիսի 9-ին ազատագրեցինք Շուշին: Ահա այդ դեպքերից մեկի համահեղինակը Դուք եք: Այդ հաղթանակն իրոք մեծ երեւույթ է եւ միայն մարզական ձեռքբերում չէ», նշել է ՀՀ նախագահը:**

**«Ինձ համար մեծագույն պատիվ է ստանալ այդ բարձր պարգեւը: Գիտեք, ես հարյուրտոկոսանոց հայ եմ: Ծնողներս Արդվինի հայեր լինելով, ժամանակին փախել են ցեղասպանությունից: Հայրս մեծ հայրենասեր էր: Ինձ համար մեծ պատիվ էր 1973-ին գլխավորել «Արարատը»: Եվ այն, ինչ արեցին այդ տղաները՝ նվաճելով չեմպիոնի տիտղոսն ու գավաթը, ինձ համար որպես մարզչի, մեծ տոն էր: Հնարավոր չէ փոխանցել, թե այն ժամանակ ինչպես արձագանքեց ժողովուրդը: Իսկապես, դա հրաշալի թիմ էր: Դրա համար էլ այդ սերնդին եւ, իհարկե, մեր ամբողջ ժողովրդին պարզապես շնորհակալ եմ ու խոնարհվում եմ նրանց առջեւ», նշել է Նիկիտա Սիմոնյանը:**

# Տիգրան Պետրոսյանը պահպանեց դիրքերը

**Տաշքենդի շախմատի մրցաշարի 7-րդ տուրում Տիգրան Պետրոսյանը հաշտություն կնքեց Մաքսիմ Տուրովի հետ: Ոչ-ոքի ավարտ ունեցավ նաեւ մյուս երկու առաջատարների՝ Միխեիլ Մչեդլիշվիլու եւ Յուրի Կուզուբովի մրցավեճը: Իսկ ահա Մուրթազ Կազգալեեւը պարտվեց Եվգենի Միրոշնիչենկոյին: 7 տուրից հետո Պետրոսյանը, Տուրովը, Կուզուբովը, Ֆիլիպովը, Մչեդլիշվիլին եւ Միրոշնիչենկոն 5,5 միավորով գլխավորում են աղյուսակը: 8-րդ տուրում Պետրոսյանը սպիտակներով կխաղա Միրոշնիչենկոյի հետ: Մրցաշարի ավարտին մնացել է 2 տուր:**

# Սամվել Տեր-Սահակյանն առաջատարների թվում է

Շախմատի Եվրոպայի առաջնության 3-րդ տուրում աղյուսակը գլխավորող 3 հայ շախմատիստներից հաջողությունն ուղեկցեց միայն Սամվել Տեր-Սահակյանին: Նա Զբինեկ Հրաչեկի հետ պարտիայում 3-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց: Իսկ ահա Հրանտ Մելքումյանն ու Ավետիք Գրիգորյանը հաշտություն կնքեցին համապատասխանաբար Բորիս Գրաչովի եւ Լելա Ջավախաշվիլու հետ:

Մեր շախմատիստներից հաղթանակ տարավ նաեւ Զավեն Անդրեասյանը: Նիկոլա Դյուկիչի նկատմամբ հաջողությունն երկրորդն էր մրցաշարում: Հակոբյան-Ռոգոզենկո, Փաշիկյան-Մարտինովիչ, Ռոմանիշին-Սարգսյան պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի:

Անդրանիկ պարտությունը կրեց ՀՀ չեմպիոն Ռոբերտ Հովհաննիսյանը՝ զիջելով Սերգեյ Ռուբլյովսկուն: Վլադիմիր Պողոսյանն էլ պարտվեց Նատալիա Ժուկովային: 3 տուրից հետո Սամվել Տեր-Սահակյանը 11 շախմատիստների հետ գլխավորում է աղյուսակը: Հրանտ Մելքումյանը, Ավետիք Գրիգորյանը եւ Զավեն Անդրեասյանն ունեն 2,5-ական միավոր:

# Ալկոհոլ օգտագործողների մուտքը մարզադաշտ կարգելվի

Ռուսական լրատվամիջոցների տեղեկացմամբ՝ «Հանրապետական» մարզադաշտի մերձակայքում ոստիկանները պատրաստվում են ռուսաստանցի ֆուտբոլասերներին ալկոհոլային ստուգման ենթարկել հատուկ սարքերի միջոցով: Այս առնչությամբ Ռուսաստանի ֆուտբոլասերների ընկերության նախագահ Ալեքսանդր Շպրիգինը հայտարարել է, որ եթե Երեւանում նման բան տեղի ունենա, ապա հունիսին Մոսկվայում կայանալիք պատասխան խաղում էլ ռուս ոստիկանները պետք է հայ երկրպագուներին ստուգման ենթարկեն թմրանյութ հայտնաբերելու համար:

ՀՖՖ գործադիր տնօրեն Արմեն Մինասյանը վերը նշված տեղեկատվությունը կասակ է համարել, հայտարարելով, որ առաջին անգամ է լսում այդ մասին: Ըստ Մինասյանի, խաղի կազմակերպչական աշխատանքները կատարվելու են միջազգային նորմերին համապատասխան: Միաժամանակ նա ավելացրել է, որ ամեն դեպքում հարբած վիճակում ֆուտբոլասերների մուտքը մարզադաշտ կարգելվի:

Նշենք, որ ռուսական կողմին 1000 տոմս է հատկացված, սպասվում է 40-50 լրագրողների ներկայությունը մարզադաշտում: «Հանրապետականում» ռուսաստանցի ֆանատների համար առանձին հատված է հատկացված, որն առանձնացված է պարիսպներով: Այնպես որ արվել է ամեն ինչ անցանկալի միջադեպերից խուսափելու համար:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# Օրվա հետքերով

Երեւանի ոստիկանապետ **Ներսես Նազարյանը** որպես վկա հարցաքննվել է Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության նախկին պետ Հովհաննես Թամամյանի դեմ հարուցված քրեական գործի շրջանակներում:

«Այդ չարաբաստիկ քրեական գործի շրջանակներում երեկ չէ առաջին օրը հրավիրվել եմ հատուկ քննչական ծառայություն` վկայի կարգավիճակով: Ինձ լսել են, ինչ բացատրություն պետք է եղել, ես տվել եմ: Իսկ ինչո՞ւ չպետք է բացատրություն տայի, եւ բոլորը, ովքեր եղել են դեպքի վայրում, մասնակցել են այդ գործի ընթացքին եւ ղեկավարմանը, պարտադիր բոլորին լսում են»:

Հովհաննես Թամամյանը կալանավորվել է հինգշաբթի երեկոյան: Նրան ներկայացվել է պաշտոնական

## Ծանր հանցագործությունների 61.6 տոկոսը կատարվում է Երեւանում

### *Երեւանի ոստիկանապետը Թամամյանի գործով հարցաքննվել է*

լիազորությունները չարաշահելու մեղադրանք: Նազարյանը գործի ընթացքից այլ մանրամասներ չհայտնեց` շեշտելով, որ նախաքննությունը շարունակվում է: Միայն հավելեց, որ չարաշահումներին որեւէ առնչություն չի ունեցել: Նա հերքեց լուրերը, թե ոստիկանության Արաբկիրի բաժնի նախկին պետ Վարազդատ Ադամյանը իր ցուցմունքներում, բացի Թամամյանից, իր անունն էլ է տվել: «Աստված հեռու պահի նման բաներից: Երեւան քաղաքի ոստիկանության պետը նման դեպքերին որեւէ առնչություն չունի: 7 տարի իրար հետ աշխատում ենք, դուք չեք լսել, որ մասնակից լինեմ նման որեւէ հնչեղություն ունեցող քրեական գործերի կամ ինչ-որ օրինազանցությունների»:

Նազարյանն ասաց, որ առաջիկայում կբացվեն ու կվերանայվեն Թամամյանի հետ կապված այլ գործեր: Ըստ շրջանառվող լուրերի` Թամամյանի անվան հետ է կապվում նաեւ Լեւոն Գուլյանի մահը: Ոստիկանության վարկածով` պատուհանից ցած էր նետվել, իսկ հարազատների վարկածով` սպանվել ոստիկանությունում:

Անդրադառնալով մայրաքաղաքում հանցագործություններին` Նազարյանն ասաց, որ երկու ամսվա ընթացքում արձանագրվել է հանցագործությունների ընդհանուր թվի նվազում` 11 դեպքով: 26 դեպքով նվազել են քրեական հետախուզության գծով հաշվառված հանցագործությունները: Ծանր հանցադեպերի քանակն աճել է 23-ով, իսկ առանձնապես ծանրերը նվազել են 6-ով:

Երեւանի ոստիկանապետի փոխանցմամբ` հանրապետությունում հաշվառված հանցագործությունների 56.8 տոկոսը գրանցվել է մայրաքաղաքում, այդ թվում` ծանր դեպքերի 61.6 տոկոսը: Ըստ հանցատեսակների էապես նվազել են անձի եւ սեփականության դեմ ուղղված հանցագործությունները: Ընթացիկ տարին սկսել են դեպքերի բացահայտման աճով: Աճել են ծանր եւ առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտման ցուցանիշները: Հունվար-փետրվար ամիսներին Երեւանում հայտնաբերվել ու մեկուսացվել է 22 հանցավոր խումբ` 14 անձով:

Անդրադառնալով Ազատության հրապարակում օրեր առաջ տեղի ունեցած միջադեպին, երբ ոստիկանները ուժով արգելել են «Ժառանգության» անդամներին անժամկետ հացադուլ հայտարարած Րաֆֆի Հովհաննիսյանի հանգստի համար վրան տեղադրել, ոստիկանության գեներալ-մայորն ասաց.

«Ծածկը պատառոտել չի եղել, պատառոտել հասկացությունն ի՞նչ է նշանակում, թույլ չեն տվել վրան տեղադրել, հանել են, դրել մի կողմ»:

Նազարյանը փաստեց, որ վրանի տեղադրման արգելման համար որեւէ օրենսդրական հիմք չի եղել: «Իմ հրամանով թույլ չեն տվել տեղադրել, իմ հրահանգով թույլ չեն տվել դնել, որ նախադեպ չդառնա»:

Անդրադառնալով մարտի 3-ին կառավարության շենքի դիմաց «Ժառանգության» պատգամավորների ու ոստիկանների միջեւ տեղի ունեցած միջադեպին, Նազարյանն ասաց, որ պատգամավորին իրավունք տրված չէ վիրավորելու ու լկտի արտահայտություններ հնչեցնելու ոստիկանների հասցեին:

«Ոչ մեկի թույլ չեմ տա վիրավորել ոստիկաններին: Ո՛չ Սամսոն Խաչատրյանին թույլ կտամ իր բռունցքները գործածել, ո՛չ էլ շրջանից եկած կանանց` անիծել ոստիկաններին: Նույն Զարուհի Փոստանջյանը կես մետրից հեռախոսով նկարում է, սադրում: Ինչքան նկար պետք է, թող Շամշյանից վերցնի: Բայց ոչ մեկ չի ասում` այ տիկին, էս ի՞նչ ես անում»: Ներսես Նազարյանի գնահատմամբ` իրենք ավելի լավ են լեզու գտնում ՀԱԿ-ի ներկայացուցիչների հետ, քան` «Ժառանգության» պատգամավորների:

Նազարյանն ասաց, որ տեղի ունեցած միջադեպերից հետո որոշում է կայացվել, որ այսուհետեւ ոստիկանների եւ ժողովրդի միջեւ շփում չի լինելու:

Հասարակական կարգի պահպանման նպատակով Կենտրոն համայնքի հասարակական վայրերում մինչեւ այս տարվա առաջին կիսամյակի ավարտը նախատեսվում է տեսահսկման համակարգեր տեղադրել: Սկզբնական շրջանում նախատեսվում է տեսախցիկների տեղադրում 10 հասարակական վայրերում` Ազատության հրապարակ, Ազնավուրի հրապարակ, Մատենադարանին հարող տարածք: Երեւանի ոստիկանապետի գնահատմամբ` տեսախցիկների միջոցով հնարավոր կլինի ավելի շուտ բացահայտել կողոպուտի, խուլիգանության, մարմնական վնասվածքներ հասցնելու դեպքերը: Դեռեւս հայտնի չէ, թե քանի տեսախցիկ կտեղադրվի: Նազարյանի համոզմամբ` որքան շատ տեղադրվի, «այնքան մեր օգուտն է»: Նա վստահեցնում է, որ տեսախցիկների ֆիքսած կադրերը չեն մոնտաժվելու, ու առաջարկում է վստահել միմյանց:

Այսօր կայանալիք Հայաստան-Ռուսաստան ֆուտբոլային խաղը դիտելու եկած երկրպագուներին էլ, մինչ մարզադաշտ մտնելը, կստուգեն` արդյոք ալկոհոլ օգտագործե՞լ են: «Հայ եւ ռուս երկրպագուների օգտագործած ալկոհոլի չափաքանակը կստուգվի հատուկ սարքերով: Դրա համար պարտադիր չէ նրանց խուզարկել: Պետք է այնպես անենք, որ մարդկանց չվիրավորենք, սակայն թույլ չտանք, որ միջոցառումը վերածվի անկարգության:

Ֆուտբոլային հանդիպմանը ներկա գտնվելու համար ՌԴ-ից Հայաստան է եկել մոտ 500 երկրպագու: Եվս 1000 երկրպագուի այցելություն էլ սպասվում է այսօր: «Ռուսաստանի հավաքականի երկրպագուներն աչքի են ընկնում իրենց արարքներով, չեմ ուզում ասել` վատ արարքներով, ամեն դեպքում երկրպագուներ են, հետեւաբար ՌԴ իրավապահների հետ համագործակցության ուղի ենք գտել: Մենք ձեռնարկելու ենք խիստ միջոցներ անկարգությունների դեպքում: Հյուրերը` հյուր, իսկ կարգուկանոնը` կարգուկանոն»:

Նազարյանն էլ է խաղին ներկա գտնվելու, կանխատեսում է Հայաստանի հավաքականի հաղթանակը:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ


### ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է ՀՀ Արմավիրի մարզի Գայ համայնքում հողի սեփականատեր Սեդրակ Սեդրակյանի ձկնատնտեսական նպատակով ստորերկրյա ջրային ռեսուրսից 43,0 լ/վրկ ջրառի նոր ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն` Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2011 թ. ապրիլի 1-ին, ժամը 16-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

*ՀՀ բնապահպանության նախարարություն*

### ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է ՀՀ Արմավիրի մարզի Գայ համայնքում հողի սեփականատեր Սեդրակ Սեդրակյանի ձկնատնտեսական նպատակով ստորերկրյա ջրային ռեսուրսից 165,0 լ/վրկ ջրառի նոր ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն` Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2011 թ. ապրիլի 1-ին, ժամը 16-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

*ՀՀ բնապահպանության նախարարություն*

### ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է ՀՀ Արմավիրի մարզի Գայ համայնքի վարչական տարածքում հողի սեփականատեր` Մարգար Սեդրակյանի ձկնաբուծության նպատակով ստորերկրյա ջրային ռեսուրսից 100,0 լ/վրկ ջրօգտագործման թույլտվության գործունեության երկարաձգման նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն (հասցեն` Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2011 թ. ապրիլի 1-ին, ժամը 16-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

*ՀՀ բնապահպանության նախարարություն*




www.azg.am


## ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռոբերտ Հովսեփի Ավագյանի 80 -ամյակը



Լրանում է հայ անվանի ֆիզիկոս, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Ֆիզիկոսների Հայկական ընկերության նախագահ, Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայի գլխավոր մասնագետ, ֆիզմաթ գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Ռոբերտ Հովսեփի Ավագյանի ծննդյան 80 և գիտա-մանկավարժական գործունեության 55 տարին:

Ռոբերտ Հովսեփի Ավագյանը ծնվել է 1931թ. մարտի 28-ին, Երևանում: 1954թ. համալսարանի ֆիզմաթ ֆակուլտետն ավարտելուց հետո նա անցնում է աշխատանքի ընդհանուր ֆիզիկայի ամբիոնում որպես լաբորանտ: 1957թ. նա ընդունվում է Երևանի ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտուրա` Արտեմ Իսահակի Ալիխանյանի ղեկավարությամբ: 1959թ. նա գործուղվում է Մոսկվա (ԼՋՆՂ), որտեղ աշխատում է ակադեմիկոս Աբրահամ Իսահակի Ալիխանովի ղեկավարության տակ: Դրանք հետաքրքիր հայտնագործությունների տարիներ էին: Ռ. Ավագյանն իրեն հատուկ եռանդով ու նվիրվածությամբ մասնակցում է Ա.Ալիխանովի լաբորատորիայում կատարվող հետազոտություններին և ստանում նոր արդյունքներ, որոնք հետագայում հաստատվում են հոլանդացի գիտնականների կողմից: Հենց այդ արդյունքների հիման վրա Ռ.Ավագյանը 1965 թ. պաշտպանում է իր թեկնածուական թեզը:

Երևանի էլեկտրոնային սինքրոտրոնի կառուցման կապակցությամբ, Ռ.Հ. Ավագյանը ղեկավարում է բևեռացված ֆոտոնային փնջերի ստեղծման աշխատանքները:

Սկսած 1975թ. Ռ.Հ.Ավագյանը իրականացնում է մի շարք կարևոր գիտափորձեր նուկլոնային ռեզոնանսների հետազոտման վերաբերյալ:

1978թ. Ռ.Հ.Ավագյանը Ստենֆորդի SLAC գծային արագացուցչի վրա կատարում է հետազոտություններ ալմաստի միաբյուրեղում բարձր էներգիաների կանալացված պոզիտրոնների ճառագայթման վերաբերյալ: Ստացված արդյունքների մի մասը հիմք հանդիսացավ նրա դոկտորական թեզի համար, որը նա պաշտպանեց 1981թ.:

Հետագա տարիներին նրա ղեկավարությամբ իրականացվել են մի շարք կարևորագույն գիտափորձեր կանալացման պայմաններում էլեկտրոնների ճառագայթումը հետազոտելու վերաբերյալ:

1987թ. Ռ.Հ.Ավագյանը կատարում է հաջողված գիտափորձ նոր տիպի ճառագայթում բացահայտելու ուղղությամբ (Քվազիչերենկովյան ճառագայթում, PXR), որը բացում է նոր հեռանկարներ ռենտգենյան ֆոտոնների մոնոքրոմատիկ աղբյուրներ ստեղծելու ուղղությամբ:

Վերջին տարիներին Ռ. Ավագյանը հանձն է առել Հայաստանում կատարել միջուկային բժշկության կենտրոնի ստեղծման աշխատանքները: Նրա նախաձեռնությամբ մշակվել են գծային արագացուցչների հիման վրա տեխնեցիում-99-ի (99Tc) ստացման նոր տեխնոլոգիաներ:

Ռ.Ավագյանի նախաձեռնությամբ ՀՀ Կառավարությունը որոշում է ընդունել Բելգիայից գնել Cyclone 18 արագացուցիչ, որը կօգտագործվի կյանքի շատ կարճ տևողություն ունեցող ռադիոնուկլիդներ ստանալու համար: Վերջիններս օգտագործվում են պոզիտրոնային էմիսիոն տոմոգրաֆով չարորակ ուռուցքների ախտորոշման համար:

Ներկայումս նա ղեկավարում է Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային լաբորատորիայում նոր իոնային արագացուցչի ստեղծման աշխատանքները, որը կունենա շատ կարևոր նշանակություն Հայաստանում միջուկային բժշկության և միջուկային ֆիզիկայի հետագա զարգացման համար:

2000թ. Ռ.Հ.Ավագյանի կողմից նախապատրաստվել են նոր առաջարկություններ շրջանային բևեռացված ֆոտոնային փնջերի ստեղծման վերաբերյալ E-159, E-160 և E-161 (SLAC, Ստենֆորդ, ԱՄՆ) գիտափորձերում:

1989թ.-ից Ռ.Ավագյանը Հայաստանի Ֆիզիկոսների ընկերության նախագահն է: 1999թ. Ռ.Հ.Ավագյանը Լոնդոնի Ֆիզիկայի Ինստիտուտի կողմից ընտրվել է որպես Եվրոպայի Արտոնյալ Ֆիզիկոս: Նա հեղինակ է ավելի քան 200 գիտական աշխատությունների, որոնցից շատերը լայն ճանաչում ունեն: Ռ.Ավագյանը պատրաստել է բազմաթիվ երիտասարդ ֆիզիկոս-փորձարարների, որոնք այսօր մեծ հաջողությամբ աշխատում են աշխարհի խոշոր գիտական կենտրոններում:

Հղելով ջերմ շնորհավորանքներ ծննդյան 80-ամյակի կապակցությամբ, Ռոբերտ Ավագյանին մաղթում ենք քաջառողջություն, ստեղծագործական անսպառ եռանդ և գիտական նորանոր նվաճումներ :

ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս
ՅՈՒՐԻ ՇԻԼԻՆԳԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի, աստղաֆիզիկայի բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ` 58-29-60

Լրատվական գործունեություն իրականացնող` «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երևան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը` 02 Ա N 047261, տրված` 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակը` 3000, ստորագրված է տպագրության` 25.3.2011, գինը` 100 դրամ, տպագրված է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում` Իսահակյան 28: